Որ քաւէ զմեղս քո. բժշկէ զամ հի-
ւանդութիւնս քո։
Որ փրկէ յապականութենէ զկեանս քո.
պսակէ զքեզ ողորմութբ և գթութբ։
Որ լնու ի բարութենէ զցանկութի քո. նո-
րոգեսցի որպս արծուոյ մանկութի քո։
Առնէ ողորմութիս Տր, և իրաւունս
ամն զրկելոց։
Ցուցց Տր զճանապարհս իւր Մովսէ-
սի, և որդւոցն Իսրլի զկամս իւր։
Գթած ողորմած է Տր, երկայնա-
միտ և բազումողորմ
Ոչ իսպառ բարկանայ մեզ Տէր, և
ոչ յաւիտեան պահէ ոխս։
Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տր,
և ոչ ըստ անօրէնութեան մերում
հատոյց մեզ։
Զի որպս բարձր են երկինք յերկրէ,
այնպէս զօրացոյց Տէր զողորմութի
իւր ի վր երկիւղածաց իւրոց։
Որչափ հեռի են արևելք յարևմը-
տից, այնչափ հեռի արար ի մէնջ
զանօրէնութիս մր։
Որպս գթայ հայր ի վր որդւոց իւրոց.

այնպ՟ գթացի Տ՟ր յերկիւղածս իւր։
Զի նա գիտաց զաստեղծուածս մեր,
և յիշեաց թէ հող եմք։
Մարդոյ ոպ՟ խոտոյ են աւուրք իւր.
ոպ՟ ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։
Շնչէ ՚ի նմա հողմ, և ոչ է՝ և ոչ ևս
երևի տեղի նորա։
Բայց ողորմութիւն Տ՟ն մնայ յաւի-
տեանս յաւիտենից ՚ի վ՟ր երկիւղա-
ծաց իւրոց, և արդարութիւն ն՟ր
յորդւոց մինչև յորդիս։
Որք պահեն զուխտ նորա, յիշեն
զպատուիրանս ն՟ր՝ և առնեն զնա։
Տ՟ր յերկինս պատրաստեաց զաթոռ
իւր. արքայութի ն՟ր ա՟մցուն տիրէ։
Օրհնեցէք զՏ՟ր ա՟մ հրեշտակք ն՟ր՝
հզօրք զօրութ՟բ. որք առնէք զբան՟ս
ն՟ր ՚ի լսել ձայնի պատգամաց ն՟ր։
Օրհնեցէք զՏ՟ր ա՟մ զօրութիւնք ն՟ր,
պաշտօնեայք և ա՟րրողք կամաց ն՟ր։
Օրհնեցէք զՏ՟ր ա՟մ գործք նորա.
զի ընդ ա՟մ տեղիս է տ՟րութի ն՟ր.
օրհնեա անձն իմ զՏ՟ր։
Տ՟ր՝ լուր աղօթից իմոց. ունկնդիր


խըն

խնդրուածոց իմոց ճշմարտութ̃ քով։
Լուր ինձ արդարութ̃ քով. և մի՛ մ
տաներ 'ի դատաստան ընդ ծառայի
քում. զի ո՛չ արդարանայ առաջի քո
ամ̃ կենդանի։ Հալածեաց թշնամին
զանձն իմ. խոնարհ արար յերկիր
զկեանս իմ. և նստոյց զիս 'ի խաւարի
ոպ̃ մեռեալ յաւիտենից։
Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ
իմ խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրս զառաջինս. խոր
հեցայ յամ̃ գործս քո. յարարածս
ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի
առ քեզ զձեռս իմ։
Անձն իմ ոպ̃ երկիր ծարաւի է առ
քեզ. փութապէս լո՛ւր ինձ Տր̃. զի
նուաղեցաւ յինէն հոգի իմ.
Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն.
նմանեցայց այնոցիկ, որք իջանեն 'ի
գուբ։ Լսելի՛ արա ինձ առաւօտու
զողորմութիւնս քո. զի ես 'ի քեզ
Տր̃ յուսացայ։
Ցոյց ինձ ճանապարհս՝ յոր և գնացից.
զի առ քեզ Տր̃ համբարձի զանձն իմ.

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տ՟ր․
զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել զկամս քո․ զի դու
ես ա՟ծ իմ։ Հոգի քո բարի՝ առաջ
նորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տ՟ր՝ կեցուսցես
զիս․ արդարութ՟բ քով հանցես 'ի նե֊
ղութ՟է զանձն իմ։
Ողորմութ՟բ քով սատակեա զթշնա
միս իմ․ և կորո զա՟մ նեղիչս անձին
իմոյ․ զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ։ Այժմ և միշտ և յաւի
տեանս յաւիտենից․ Ամէն։

Երգ Տեառն Ներսէսի Հայոց Կաթողի֊
կոսի շնորհալւոյ Ասացեալ 'ի Պաղ֊մտան գիշերոյ։

Յիշեսցուք 'ի գիշերի զա֊
նուն քո տէր։
Ուղղեսցեն սիրտք մեր
զբան բարի․ և լեզուք մեր պատմես
ցեն զգործս երկնաւոր թագաւորին դ֊
'Ի

Ի մէջ գիշերին յարուցեալ խոստովանեսցուք ընդ քեզ տէր։
Զաղօթս մեր տացուք քեզ տր՝ ի գաւիթս քո՝ ի մէջ նոր երուսաղէմի։
Ի գիշերի համբարձցուք ընդ ձեռս մեր սրբութբ առ քեզ տր։
Ի ձայն գոհութե ամենայն հոգիք օրհնեցէք զտր։
Զարթիք փառք իմ զարթիք. եւ ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա։
Զարթիք ընդ զուարթունս մանկունք վերին նորին սիոնի. ալէ.
Զարթիք որդիք լուսոյ ի յօրհնութիւն հօրն լուսոյ. ալէ։
Զարթիք փրկեալք արեամբ. եւ տուք ընդ փառս փրկողին. ալ.
Զարթիք նոր ժողովուրդք. նոր երգս առեալ նորոգողին. ալ.
Զարթիք հարսունք հոգեւոր սպա-



սեալք

սեալք գալոյ ո՜ր փեսայի՛ն · ա՛ն ։
Զարթի՛ք վառեա՛լք լուսա՛ւոր ըստ
իմաստու՛ն ո՜ր կուսանացն · ա՛ն ։
Զարթի՛ք պատրաստեցէ՛ք իւղ լա՛պ
տե՛րաց զջե՛րմ ա՛րտասուօ · ա՛լէ՛ ։
Զարթի՛ք և մի՛ նը՛ ննջէ՛ք նը՛մա՛ն
յի՛մա՛ր կու՛սից նի՛րհէ՛ք · ա՛լէ՛ ։
Զարթի՛ք երկի՛րպա՛գցու՛ք և ա՛ր-
տասուօ՛ք զոյս ասասցու՛ք · ա՛լէ՛ ։
Զարթի՛ր ը՛նդէ՛ր ննջե՛ս · տէ՛ր
մի՛ մե՛րժե՛ր ըզ մե՛զ իսպա՛ռ ։
Արի՛ տէ՛ր օգնեա՛ մե՛զ · տա՛ցու՛ք
անուա՛ն նո՛րա քու՛մ ըզ փա՛ռս ։
Այժմ և յա՛ւէ՛տ հօ՛ր և ո՛րդւո՛յ
և սու՛րբ հո՛գւո՛յն ա՛մէ՛ն ։
Զարթու՛ցեա՛լքս ՚ի՛ ղեկո՛ղմա՛նէ՛ ·
գի՛շե՛րայի՛ն հա՛նգըստենէ՛ ։
Շնո՛րհեսցէ՛ մե՛զ մա՛րդասէ՛ր տէ՛ր ·
մի՛ւ թա՛գաւո՛րութի՛ւն և ՚ի՛ սփո՛փա՛նս
ե՛կե՛ղե՛ցւո՛յ ։



Ա՛

Ահիւ եւ դողութեամբ կայցուք
ի յաղօթս։
Ի՛ կեալ խոստովանեսցուք ըզ
յանցանս։
Ու գրեսցուք ի քրիստոս զքա
ւորէն եւ ըզ մեծ ողորմութիւն։
Ա. Նբաժամնելը եւ ըն համագոյ էր
բորբոքեալ համա ձայնեալ ընդ
ըզօրս երկնից փառս մա
տուցանեմք։

Փառք քեզ։ Որ յանարատ
յաթոռ բարձրագոյն հանգչիս.
Տէր Տէր հզօր եւ ամենակալ։
Փառք քեզ։ Որ յանէից գոյա
ցուցեր զամենայն արարածս. Տէր
Տէր ամենակալ հօր անեղ որդի։
Փառք քեզ։ Որ տեսչութիւն խնա
մով զամենայն արարածս. Տէր Տէր
բարձրեալ անքննելի։
Տէր։ Ժողովրդապետաց եկեղեց

ցուց՝ 'ի քէն հայցեն անսելով. հովիւդ
բարի՝ ողորմեա՛ բանաւոր հօտի՛։
Ամէն. ալէլուիայ. ալէլուիայ. ալէ։
Ամէն. ալէլուիայ. ալէլուիայ. ալէ։

Քարոզ։

Զարթուցեալքս ամենքն 'ի հան
գստենէ քնոյ. զոր շնորհեաց
մեզ մարդասէրն Ած 'ի մխիթա
րութի և 'ի սփոփումն տկարութե մերում։
Եւ եկեալքս միաբան հոգևոր եր
գով 'ի փառաբանութի և 'ի պաշտօն ամե
նասուրբ անուան Տն մերոյ և փրկչին
Յի Քի։ Ահիւ և դողութբ կացցուք
յաղօթս առաջի նր. և գոհացարուք
զնմանէ 'ի գիշերային ժամուս յայս
միկ վս խրատանց և արդարութե նր։
Սա խնդրեսցուք զմեզ ողորմութեամբն
իւրով. և շնորհեսցէ մեզ բերել ըզ
նմանութի երկնային հրեշտակացն 'ի
փառաբանիչս Տն ալ ամենայն և մեզ
լինել։ Եւ մեք այսուհետև սրբե
լով զանձինս մեր 'ի խղճէ և 'ի չար



գոր.

գործոց։ Համբարձցուք զձեռս մեր
՚ի սրբութի՛ւն՝ առանց բարկութեան և երկ
մտութեան։ Հաւատով խնդրեսցուք
՚ի Նմանէ զքաւութի՛ւն և զթողութի՛ւն յանցա
նաց մերոց։ Սա՛ստկա՛ն լինելով զգաստ
նիս սրտից մերոց ծածկագիտին Այ։
Ած զի ընդունելով զպաղատանս մեր
աղօթիւք և բարեխօսութբ ամ սբց։
Շնորհեսցէ՛ մեզ մարդասէրն Ած
կեանս առաքինութբ և անարատ վա–
րուք ըստ կամաց նր յայսմ [illegible]։
Եւ արժանաւոր լինելով յաւիտե–
նական և երկնային խորանացն։
Զոր խոստացա՛ւ սիրելեաց իւրոց
Ճշմարիտն Ած յս քս Տր մեր կեցո՛
և ողորմեա՛։ Կեցո՛ Տէ՛ր։
Զմնացուա՛ծ գիշերիս խաղաղութբ
անցուցանել՝ հաւատով ՚ի Տեառնէ
խնդրեսցուք։ Շնո՛րհեա՛ Տէ՛ր։
Զհրեշտա՛կ խաղաղութեան պահապան
անձանց մերոց ՚ի Տեառնէ՛ խնդ"։
Զքաւութի՛ւն և զթողութի՛ւն յանցանաց
մերոց ՚ի Տեառնէ՛ խնդ"։
Զսբյ խաչին մեծ և կարող զօրութին

 յօգ

յօգնութ̅ անձանց մերոց ՚ի տ̅ նէ։
Ս̅բ եւս միաբան ը̅ ճշմարիտ եւ ուղ̅
հաւատոյս մերոյ զտ̅ր աղաչեսցուք։

Տէ՛ր ողորմեա՛։

Զանձինս մե՛ր եւ զմիմեանս տ̅ն ա̅յ
ամենակալին յանձն արասցուք։

՚Քե՛զ տ̅ էր յանձին եղիցո՛ւք։

Ողորմեա՛ց մեզ տ̅ր ա̅ծ մե՛ր՝ ը̅ մեծի
ողորմութ̅ քում․ ասասցուք ամ̅ քն
միաբանութեամբ։

Տէ՛ր ողորմեա՛․ տ̅՛ր ողորմեա՛․ տ̅՛ր ողորմեա՛։
Եւ ասէ տ̅ր ողորմեա՛ ըստ պատշաճի աւուրն։
՚Ի կիրակէօրէ եւ ՚ի տօնս տէրունականս՝ երեք
տէր ողորմեա՛։ Իսկ ՚ի տօնից սրբոց՝ Ծ տէր
ողորմեա՛։ Եւ ցաւուրս պահոց՝ Ճ տ̅ր ող̅․

՚Ի յոյնոց տ̅ն ՚ի Ներսէսէ Հայոց Կաթողիկոսէ։
Սրբերգութ̅ անցեն ասացելոյ եւ բազում եւս
ժամակնքոյ ...՝ ի ...։

Աշխարհ ամ̅․ աւխ նայեցեալք․
սխրանկեց լերուք Բանամ
ըղձ շրթունս․ բարբառիմ լեզուաւս․

բողոքեմ զանձնէս · Տէր ողորմեա
Տէր ողորմեա Տէր ողորմեա։
Գող եղէ մեղաց · գլխող կորըս_տեան · գուբ ինձ փորեցի։ Խաբե_ցի զանձն իմ · դաւաճանեցի · դա_րան գործեցի · տէր ողոր"։
Որբեամ էի լոյս · և այժմ եմ խա_ւար · և բառնաւէր մահու։ Զի արդ պատմեցից · զթիւ մեղաց իմոց · զի բազում են յոյժ · տէր ողոր"։
Երկինք և երկիր · եկայք ողբա_ցէք · եղկելի զանձն իմ։ Ընտրե_ցի ըզ չարն · ընկալայ կամաւ · ըզ հոյլըս մեղաց · տէր ող"։
Խաթաւիմ որոգմով · Թաւալիմ ՚ի մեղս · Թօթափիլ չկարեմ։ Վասն ախտից լըցեալ · ժահահոտ եղէ · ժամանակս բազումս · տէր ող"։
՚Ի բաց մեկնեցայ · ՚ի սբ խորհրդոց · ՚ի բարեաց գործոց։ Լաւ վարկաւ անձն իմ · լուսոյն հեռանալ · լինիլ ընդ խաւար · տէր ողոր"։
Խորհուրդըք չարին · խաբեն ըզ հո_գիս · խորամանգ առնեն։ Ծածկեն
ան

տնդընդօք · ծիծաղին գլորմամբս ·
ծանակ զի առնեն · տէր ող՛՛։
Աչամաւ կորացայ · կարկամեալս ան-
ձամբ · կանգնիլ ոչ կարեմ։ Հուր մե-
ղաց կիզող · հրդեհեաց որ զիս ·
հոգւոր բարիս · տէր ողոր՛՛։
Զաղկեցայ մեղօք · ձաղեցին տե-
սողք · ձանձրացայ հոգիս։ Վերին
դառնութեան · զօղեալ 'ի սիրտ իմ ·
ղամպար իմ շիջաւ · տէր ող՛՛։
Ճաշակմամբ մեղաց · ճաշեցի զմահ ·
ճոխս աղքատացայ։ Մեռեալ եմ
հոգւովս · մոլորեալ մտօքս · միայն
կամ մարմնովս · տէր ողոր՛՛։
Յորդայթ մահու · յորսողին ան-
կայ · յաղթեցայ յախտից։ Նետից
թշնամեացն · նշաւակ եղէ · նոր
միշտ խոցոտիմ · տէր ող՛՛։
Շուրջ պատեալ զինև · շունք բա-
զումք եղեն · շաղախին արեամբս։
Ներս եղէ չարին · ուռկանաւ մեղաց ·
որսացաւ զանձն իմ · տէր ող՛՛։
Զարաչար վշտօք · չարչարի անձն
իմ · չունիմ դադարումն։ Պարտա



պան

պան գրոյ · պարտուց յանցանաց ·
պարտեալս 'ի մեղաց · տէր ող՛՛:
Չ անամ զըղջանալ · չերանիմ դառ-
ձեալ · չեռանում հրով մեղաց:
Ռաբբի կոչեցայ · ուսկոյ անուանիմ ·
ռամկական վարուքս · տէր ող՛՛:
Սիրով ցանկուէ · ստորիկ բարկուէ ·
սիրտ իմ խոցեալ է: Վ երջք յանցա-
նաց · վըշտանայ հոգիս · վարանեալ
շըւ ջիմ · տէր ողոր՛՛:
Տիրեցին ինձ չարք · տարագիր հա-
նին · տէրական գըրկացն: Ռաբու-
նւոյ բարւոյ · ըսխճական ձայնին ·
ըստերնս ոչ լուայ · տէր ող՛՛:
Յանկութի չարեաց · ցանկալի գի-
մօք · ցաւեցոյց զսչս իմ: Իւրու-
քանչիւրոց · ուիւսմամբ խուռն ախ-
տից · ուիւծեալ է հոգիս · տէր ող՛՛:
Փութացի՛ր անձն իմ · փախչիլ 'ի չա-
րեաց · փափագիլ բարեաց: Քեզ միշտ
մերձ ծանի՛ր · քուն մահու եկեալ ·
քըննող դատաւոր · տէր ող՛՛:
Լուսաւորածնին բարեխօսութբ ,
յիշեա՛ տէր և ողորմեա:

Նոյնոյ տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի։ Երգ աղօթական ի դէմս սրբոյ Երրորդութեան նաև բարեխաւսութեամբ դէմ Երրորդութեան առանձնակի։

Առաւօտ լուսոյ. արեգակն արդար. առ իս լոյս ծագեա։ Բղխումն ի Հօրէ. բղխեա՛ ի հոգւոյս. բանք քեզ ի հաճոյս։ Գանձդ ողորմութեան. գանձիդ ծածկելոյ. գտօղ զիս արա։ Դուռն ողորմութեան. դասանողիս բաց. դասեցո՛ վերնոց։ Երրորդեալ միութիւն. եղելոց խնամօղ. և ինձ ողորմեա։ Զարթի՛ր տէր յօգնել. զարթո՛ ըզ թմբրեալս. զուարթնոց նմանիլ։ Էդ Հայր անսկիզբն. էակից Որդի. է միշտ սուրբ Հոգի։ Ընկա՛լ զիս գթած. ընկա՛լ ողորմած. ընկա՛լ մարդասէր։ Թագաւոր փառաց. թողութեանց տուօղ. թո՛ղ ինձ ըզ յանցանս։ Ժողովօղ բարեաց. ժողովեա՛ և զիս. ժողովս անդրանկաց։ Ի քէն տէր հայցեմ. ի մարդասիրէդ. ինձ բժշկութիւն։ Լեր կեանք մեռելոյս.



լոյս

լոյս խաւարել, լոյս լուծանող ցաւոյս։
Խորհրդոց գիտող. խաւարիս շնոր
հեա՛. խորհուրդ լուսաւոր։ Ծը
նունդ հօր ծոցոյ. ծածկեա՛լ լոյս սրբե
րա. ծագեա՛ զլոյս փառացդ։ Կենա
րար փրկիչ. կեցո՛ զմեռեալս. կանգ
նեա՛ զգլորեալս։ Հաստատեա՛ հաւա
տով. հաստատեա՛ յուսով. հիմնեցո՛
սիրով։ Ձայնի՛ս աղաչեմ. ձեռօքս
պաղատիմ. ձիր բարեաց շնորհեա՛։
Ղամբարամբ լուսոյ. ղեկավար ճար
տար. դողեալս ամրացո՛։ Ճառագայթ
փառացդ. ճանապարհ ինձ ցո՛յց. ճե
պել՛ի յերկինս։ Միածինդ հօր.
մո՛յծ զիս յառագաստ. մաքուր հար
սանեացդ։ Յորժամ գաս փառօք.
յահագին աւուրն. յիշեա՛ զիս Քս՛։
Նորոգօղ հնութեց. նորոգեա՛ և զիս.
նորոգ զարդարեա՛։ Շնորհատու
բարեաց. շնորհեա՛ զքաւութի՛. շնոր
հեա՛ զթողութի՛։ Ուրախացո՛ տէր.
ոգւոյս փրկութեամբն. որ վն՛ եմ՛ի
սուգ։ Չար մշակողին. չար սեր
մանց նորին. չորացո՛ զպտուղ։ Պար

 գեւին

գթիչ բարեաց · պարգևեա իմոց ·
պարտեացս թողութի̄։ Ջ ուր չնոր-
հեա աչացս · ջերմ հեղուլ արտօսր ·
ջընջել ըզ յանցանս։ Ռ ետինըդ քաղ-
ցու · ռամ հոգւոյս արբի · ռահ ցոյց
ինձ լուսոյ։ Սէր անուան քո · սիրով
քով ձըմլեա · սիրտ իմ քարեղէն։
Վ ասըն գըթութե̄ · վս̄ ողորմութե̄ ·
վերստին կեցո։ Տենչալով տես-
լեամբ · տուր ինձ յագենալ · Տէր
Յս̄ Քս̄։ Րաբունդ երկնաւոր ·
րոտեա զաշկերտս · րաբից երկնայնոց։
Ցօղ արեան քո տէր · ցօղեա ՚ի հո-
գիս · ցընծացէ անձն իմ։
Ւ իւծեալըս մեղօք · ւիւծեալ աղա-
չեմ · ւիւսել ինձ բարիս։
Փրկիչ բոլորից · փութա զիս փըր-
կել · փորձութեց մեղաց։ Քաւիչ
յանցանաց · քաւեա զօրհնաբանս ·
քեզ երգել ըզ փառս։

Ա̄ծածնին բարեխօսութեամբն՝
յիշեա տր̄ և ողորմեա։

Առաջ [illegible] ՚ի [illegible] Ածածնին [illegible] ·
[illegible]։

Աածին մայր քի· իմ կոյսըն
դու յաւուր մեծի։ Բա
րեխօս ընդունելի· քն՛ քե
մեզ ողորմեսցի· տէր ողորմեա տէր ող՛·
ա̃ծածին բարեխօսեա՛։

Դոյքն տէրն ամենի· մեղաւորիս դա
տող լինի։ Դու ՚ի յայնմ աւուր մե
ծի· բարեխօսեա՛ քոյդ միածնի· տէր՛։
Նա ՚ի յայնմ աւուր մեծի· զքեզ աղա
չեմ տր. տիրուհի։ Ով դու մայր
ես քի· և նա լոյս իւր ծննողի· տէր։
Նորանի թէ՞ այդ ինձ լինի· մեղաւորիս
տէրն ողորմի։ Բան իմ գործոյս զոր գոր
ծեցի· չեմ ոյլ մնար թէ՞ այդ ինձ լինի
Խողուն չեմ արժանի· որդի եղէ ես
գեհենի։ Յամ հասեալ ինձ վախ
ճանի· կամ և մնամ գաբրիէլի· տէր։
՚Ի յաւուրն անէրեկի· լինիմ ես անդ
ողորմելի։ Նոյն եսու զխաւարն ա
ռի· յաւիտենից կենացն ելի· տէր՛։
Խաւարն և մութն ինձ հանդիպի·
խաւարին ՚ի դառն ձախակողմի։ Շոր
տիմ ՚ի մէջ մեղաց ոլորմի · մինչեմ

ընդ գործս իմ զազրալի · տէր ող՛:
Սարգ եսուն ինձ հրեշտակի · զայն կո
րուսի ես յանցի: Հուր գեհեննոյն ինձ
վառեցի · կամ և այրիմ անշիջելի · տէր:
Զայնիւ ընդ տէրն աղաչեցի · մի թէ
լըսէ իւր ծառային: Կոչեցի և
անցուցի · զայս անցաւոր կեանքս
աշխարհէ · տէր ողոր՛:
Ըմբեցաւ տէրն 'ի խաչին · վն իմ էարբ
զդառն և լեղի: Մայր եղէ ամէն չա
րի · և չյիշեցի զօր վախճանի · տէր՛:
Յանկարծակի մահ հանդիպի · մեղայ
չարի ոգն առաջի: Նմանեցայ ես հր
էի · և անօրէն աշակերտի · տէր՛:
Րուիղ սբյ խաչին · յարեւելից փայ
լեալ ծագի: Սուր ամ բանք բռպաւին
և գործք մոլորդ՟ին յայտնի լինին · տէր:
Զեմ արժանի ես հաղորդի · ոչ քհնյ
պատարագի: Պտրգս զոր մատուցի ·
կրկին ընդ տէրն 'ի խաչ հանել · տէր՛:
Մանք դըրդի ամէն չարի · և չյիշեցի
զօր վախճանի: Սուտ բաշխէ տէրն
ամենի · զողորմուխ իւր ծառայի · տէր:
Սրբութին ես տեսցի · զաղտեղութիւն
մի

սիրեցի։ Մայ աւուրն խմծընընդեն
մայրըս ծնաւ մեղաց որդի. տր ո"։
Տէրըն քաղցր է և բարի. չառնէ որդի
զիս գեհենի։ Բարունայն փառք և
պատիւ. յիւր ծոյես անլըռելի. տր։
Ցընծացայ և զուարճացայ. յաւ խոս
նից ուխտացայ։ Ներհանդ էի և ողջա
ցայ. զտրն յիշեցի ասի մեղայ. տր"։
Փառըս տամ ես քի. երկըրպագեմ
սբյ խաչին։ Որոյ արեանդ ես գին
էի. և քո ծընունդ աւազանի. տր"։
Սծածնին բարեխօսութբ յիշեա տր
և ողորմեա։

Սու չնէ ասէ աղօթս։

Օ քէն գոհանամք տր ած մեր.
որ չնորհեցեր մեզ հանգիստ
քնոյ խաղաղութբ։ Նու զարթու-
ցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել
յերկըրպագութի աչաւոր և փա-
ռաւորեալ անուանդ քում սբյ։
Տուր մեզ տէր աղաչեմք զքեզ ըզ
մնացուած գիշերիս խաղաղութբ ան-
ցուցանել։ Նու զամ. ժմնակս կենաց
պանդխտութե մերոյ՝ երկիւղիւդ քո
ամ

ամրացո՛ և պահեա՛։ Որպէս զի զգուշութեամբ
և անարատ վարուք կրօնաւորեալք
յայսմ Տէրս՝ ժամանեսցուք յանքոյթ
և ՚ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենա
կան ՚ի կեանսդ։ Շնորհօք և մարդա
սիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի։
Ընդ որում քեզ հօր և հոգւոյդ սրբոյ
վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ։

Խաղաղութիւն Ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

«Լուսեանց Տէր բարերար ողորմութեամբ
քով յերկրպագուս և ՚ի փառաբա-
նիչս անուանդ քում սրբոյ։ Տէր զօ-
րութեանց՝ խաղաղացո՛ զանձինս մեր
յամենայն սատանայական խռովու-
թեանց և յաշխարհական զբօսանաց։
Ո՛հրեշտակ խաղաղութեան քո առաջեա՛
առ մեզ. որ եկեալ պահեսցէ զմեզ
անխռովս ՚ի տուէ և ՚ի գիշերի. յարթ
նութեան և ՚ի հանգստեան մերում։
Որպէս զի բարեպաշտութեամբ և արժանա
ւորապէս քեզ Տեառնդ ծառայելով ՚ի
կեանս յայսմիկ՝ ժամանեսցուք յա
ւիտենական երկնից արքայութեան քո.



զոր

զոր պատրաստեցեր ՚ի սկզբանէ [illegible] սրբոց քոց։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին։ այժմ և միշտ և յաւ.։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն։

Ալէլուիա Ալէլուիա։

Ապա ասէ սաղմոս ըստ ձայնին . և չինէ ասէ նոսին՝ ասէ ըստ ձայնին կանոնագլուխն։

Կանոնագլուխք հարցման ըստ ութն ձայնիցն։

Դատեա՛ Տէր զայնոսիկ՝ որք դատեն զիս . ալէլուիա։

Մարտի՛ր ընդ այնոսիկ , որք մարտնչին ընդ իս . ալէլուիա։

Ա՛ռ զզէն և զասպար քո, և արի՛ յօգնել ինձ . հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց , արգե՛լ զնոսա . և ասա՛ դու ցանձն իմ, թէ փրկութիւն քո եմ ես։ Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք խնդրեն զանձն իմ . դարձցին յետս և ամաչեսցեն , որք խորհին ինձ չար։ Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ.

մոյ · եւ հրեշտակ տեառն նեղեսցէ զնոսա։
Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խաւար
եւ ՚ի գայթակղութիւն, եւ հրեշտակ տեառն
հալածեսցէ զնոսա։
՚Ի նանիր թագուցին ինձ որոգայթ
ապականութեան իւրեանց, եւ ՚ի նանիր
նախատեցին զանձն իմ։

ԼԵ Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո · ճշմարտութիւն քո մինչեւ յամպս։
ալէլուիա ալէլուիայ։

Արդարութիւն քո որպէս լերինք Աստուծոյ · իրաւունք քո որպէս խորք անդնդոց · զմարդիկ
եւ զանասունս կեցուցանես դու Տէր։
Որպէս զի բազում արարեր զողորմութիւն
քո Աստուած · այլ որդիք մարդկան ՚ի հովանի թեւոց քոց յուսասցին։
Արբեսցին նոքա ՚ի պարարտութենէ
տան քո · եւ զուղխս փափկութեան քոյ
տացես ըմպել նոցա։
՚Ի քէն է տէր աղբիւր կենաց · եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։
Ձգեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ որք ուղիղ են սրտիւք։

Մի՛ եկեսցեն ՚ի վերայ մեր ոտք ամբարտաւանից . և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։

Անդ անկցին ամենեքեան՝ ոյք գործեն զանօրէնութիւն . մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատել։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Ալէլուիա ալ ալէլուիայ։

Ասա՛ց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ո՛չ գո՛յ Աստուած։ Ալէլուիա։ Ապականեցան և պղծեցան յանօրէնութիւնս իւրեանց . և ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն . ալէլուիայ։

Տէր յերկնից նայեցաւ յորդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ զԱստուած։

Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին, և անպիտանացան։

Ո՛չ ոք է որ առնէ զբարի, և չէ՛ ոք մինչև ՚ի մի։ Որպէս ո՛չ ծանիցեն ամենքին, ոյք գործեն զանօրէնութիւն։



Ոյք

Այլ ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի. և առ Աստուած ոչ կար-դացին:

Ոչ է՛ ո՛չ գոյր նոցա փոխանակ. և ոչ երկեան յԱստուծոյ. ա՛լլէ՛լլ լուիայ ա՛լլէլ լուիայ:
Ձգեաց զձեռն իւր ՚ի հատուցանել նոցա. և նոքա պղծեցին զօրէնս նորա:
Բաժանեցան ՚ի սրտմտութենէ երեսաց նորա. և եհաս ՚ի սիրտս նոցա:
Կակուղ էին բանք նոցա քան զձէթ. և ինքեանք որպէս սլաք:
Ընկեա՛ ՚ի տէր զհոգս քո՝ և նա կե-րակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան տատանութիւն արդարոյ:
Դու Աստուած իջուսցես զնոսա ՚ի գուբ ապականութեան. արք արիւնահեղք և նենգաւորք՝ մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես ՚ի քեզ տէր յուսացայ:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգ":
ա՛լլէլլ լուիայ՝ ա՛լլէլ: լուիայ:


՚Ի

Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան · ալէլուիա ալէլուիա: ըձ

Յարդարութեան քում փրկեա՛ և ապրեցո՛ զիս · ալէլուիա:

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո, և կեցո՛ զիս:

Լեր ինձ Աստուած ապաւէն՝ և տեղի ամրութ կեցուցանել զիս · զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես:

Աստուած իմ, փրկեա՛ զիս ՚ի ձեռաց մեղաւորի, ՚ի ձեռաց անօրինի և անիրաւի:

Դու ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ:

՚Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ · յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ · և առ ՚ի քէն է օրհնութիւն իմ յամենայն ժամ:

Երկրպագեսցեն նմա ամենայն թագաւորք երկրի · և ամենայն ազգք ծառայեսցեն նմա · ալէլուիա ալէ": փ

Զի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հզօրի · զաղքատն և զտնանկն, որոյ ո՛չ է իւր օգնական:



Խն

Խնայեսցէ նա յաղքատն և՛ի տը
նանկն · և զանձինս տնանկաց կե
ցուսցէ · ՚ի վաշխից չարաց փրկեսցէ
զանձինս նոցա։
Պատուական է անուն նորա առաջի
նոցա · կեցցէ, և տացի նմա յոսկւոյն
արաբացւոց։
Յաղօթս կացցեն առ նա յամ ժամ·
և զօրհանապազ օրհնեսցեն զնա։
Եղիցի հաստատութի ընդ ամ եր
կիր, և՛ի վերայ գլխոց լերանց։
Բարձրասցի քան զլիբանան պտուղ
նորա, և ծաղկեսցի ՚ի քաղաքի ամն
որպէս խոտ երկրի։
Եղիցի անուն ամն օրհնել յաւիտեան·
զի յառաջ քան զարեւ է անուն նր։
Ի նմ օրհնեսցին ամ ազգք երկրի,
և ամ ազինք երանիցեն նմա։
Օրհնեալ տր ած իսրայէլի՝ որ առնէ
սքանչելիս միայն· և օրհնեալ է անուն
փառաց նր յաւիտեան· լցցի փա
ռօք նր ամ երկիր · եղիցի եղիցի։
Փառք Հօր և՛։ ալէլուիայ՝ ալլ
էլ ալլէլուիայ։

Ողորմութիւնս քո Տր յաւ-
իտեան օրհնեցից · ալէ-
լուիայ ։ ազգէ յազգ պատմեցից ըզ
ճշմարտութիւս քո բերանով իմով ·
ալէ լուիայ ։

Ասացեր՝ թէ Յս ողորմութի շինեսցի ·
յերկինս պտրաստ եղիցի ճշմարտութի քո
Եդի ուխտ ընտրելոց իմոց · երդ-
ուայ Դաւթի ծառայի իմոյ ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո ·
և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո ։

Խոստովան եղիցին երկինք զսքանչե-
լեաց քոց Տր, և ճշմարտութիւն քո
յեկեղեցիս սրբոց ։

Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ ·
կամ ո՞վ նմանիցի Տն յորդիս Այ ։ փ

Դարձուցեր զօգնութի ՚ի սրոյ նր ·
և ոչ ընկալար զնա ՚ի պատերազմի ·
ալէլուիայ ալէ լուիայ ։

Անարգեցեր զսրբութի նր · և զա-
թոռ նր յերկիր կործանեցեր ։

Նուազ արարեր զաւուրս ժամանա-
կաց նր · և հեղեր զնովաւ զամօթ ։


Մին

Մինչև յե՞րբ դարձուցանես զե-րեսս քո իսպառ · բորբոքեսցի որ՛պ հուր բարկութիւն քո։
Յիշեա արդ՝ յիշեա և տես, թէ ո՞վ է իմ հանգիստ · մի թէ 'ի զո՞ւր ինչ ստեղ-ծեր զա՛մ որդիս մարդկան։
Ո՞վ է մարդ որ կեցցէ՝ և ո՛չ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց դժոխոց։
Ո՞ւր են ողորմութիւնք քո տէր առա-ջինք, զոր երդուար դաւթի ճշմար-տութեամբ քով։
Յիշեա զնախատինս ծառայի քո, զոր ընկալայ 'ի ծոց իմ յազգաց բազմաց։
Զոր նախատեցին թշնամիք քո տ՛ր· նախատեցին փոխանակ օծելոյ քո։
Օրհնեալ տ՛ր յա՛ւ յաւիտենս յաւի-տենից · եղիցի եղիցի։
Փառք հօր և՛։ ալէլուիայ՝ ա՛լէ։
գձ Խոստովան եղերուք տ՛ն՝ զի՛ քաղցր է · ալէլուիայ։ զի յաւիտեան է ողորմութիւն նո՛ր։ ալէլուիայ։



Ո՞

Ո՛ խօսեսցի զզօրութիւնս տն. լսելի
արասցէ զամ օրհնութիւնս նր։
Երանի՝ որք պահեն զիրաւունս, և
առնեն զարդարութի յամ ժամ։
Յիշեա՛ զմեզ տր ըստ հաճոյս ժողովրդ
դեան քո. և այց արա մեզ 'ի փրկութե
քում։ Տեսցո՛ւք մեք զքաղցրութի
ընտրելոց քոց. ուրա՛խ եղիցուք մեք
յուրախութի ազգի քո. և գովլիցուք
մեք 'ի ժառանգութե քում։
Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօ‿
րինեցաք և յանցեաք։
Մատնեաց զնս 'ի ձեռս հեթանոսաց.
տիրեցին նց ատելիք իւրեանց, և
թշնամիք իւրեանց նեղեցին զնս. և
խոնարհ եղեն 'ի ներքոյ ձեռաց նց։
ա՛լէլուիա յ. ա՛լէ։
Բազում անգամ փրկեաց զնս, և նոքա
դառնացուցին զնա 'ի խորհուրդս իւր
եանց. և կորացն յանօրէնութե իւրեանց
Հայեցաւ տր 'ի նեղութիւն նց, 'ի լսել
ձայնի աղօթից նց։
Յիշեաց զուխտ իւր՝ և զղջացաւ ըս


բա

բազում ողորմութեան իւրում. և ետ զնոսա
'ի գթութիւն առաջի ամենայն գերչաց նոցա:
Փրկեա զմեզ Տէր Աստուած մեր · և ժողովեա զմեզ 'ի հեթանոսաց:
Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ · և պարծեսցուք յօրհնութիւնս քո:
Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի · յաւիտենից յաւիտեանս: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն · եղիցի եղիցի:

Փառք հօր և": աղէլուիայ · աղէ:

գկ Արարի իրաւունս և արդարութիւն · ալէլուիայ: մի մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց · ալէլուիայ:

Ընկալ զծառայս քո 'ի բարի · զի մի ամբարտաւանք զրկեսցեն զիս:
Ակնկալեալ աչք իմ փրկութեան քում Տէր · և բանից արդարութեան քո:
Արա ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմութեան քում · զարդարութիւնս քո ուսո ինձ:
Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո:
Ժամ է պաշտել զՏէր · խափանեցին զօրէնս քո:

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր · ըստ բանի քում իմաստուն արա զիս · Ալէլուիայ ալէ: Դ

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր · և բանիւ քով փրկեա զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւն քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո · զի ամենայն պատուիրանք քո արդարութիւն են:

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս · զի զպատուիրանս քո ընտրեցի:

Յանկացայ փրկութեան քում Տէր · և օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ · և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ · խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Փառք Հօր և՛: Ալէլուիայ ալէ:

Օրհնեա անձն իմ զՏէր · օրհնեցի՛ց զՏէր ի կեանս իմ · Ալէ Յ ալէլուիայ: Դ·

սաղմոս ասացից ԱՌյ իմոյ՝ մինչև եմ

Ես. ալէլուիայ։

Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկութի ի նս։

Ելցէ հոգի ի նոցանէ՝ և դարձցին անդրէն ի հող. և յայնմ աւուր կորիցեն ամ խորհուրդք նց։

Երանի՛ ազգի՝ որոյ Տր ԱԾ յակոբայ օգնական է նմա. և յոյս նր ի Տր ԱԾ է։

Որ արար զերկինս և զերկիր, զծով և զամ որ ի նոսա։

Ո՛ պահէ զճշմարտութի յաւիտեան. և առնէ իրաւունս զրկելոց։

կ Գովեա Երուսաղէմ ըզՏէ՛ր.

ալէլուիայ։

Եւ օրհնեա զԱԾ քո՝ սիօն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Ո՛ եդ զսահմանս քո ի խաղաղութի. պարարտութբ ցորենոյ լցոյց զքեզ։

Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նր։ Դնէ զձիւն ոպ զասր, և զմէգ ոպ փոշի ցանեաց։

Արկանէ զսառն որպէս պատառս․
առաջի ցրտոյ նր ո՞ կարէ կալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնս․
շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք․
Պատմէ զբան իւր յակոբայ, զարդա
րութի և զիրաւունս իսրայէլի․
Ոչ այսպէս արար ամ ազգաց տր ․
և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց
նոցա։ Փառք հօր և որ"։
ալէլ՛։ Ձմ՛։ Իլուխօսյ ալէ՛։
Սիրեսցից ը՛զ քեզ՝ տ՛ր, զօրութի՛ դկ
իմ․ ալէլու՛ ա՛ ա՛ ուիա․ տր՝ հաս
տատիչ իմ, ապաւէն իմ՝ և փրկիչ իմ։
ալէլ՛ուա ա՛ ուիա։
Աստուած օգնական իմ, և ես յուսամ՚ի
նա․ ապաւէն իմ, եղջիւր փրկութե
իմոյ՝ ընդունելի իմ է։
Օրհնելով կարդացից առ տր , և՚ի
թշնամեաց իմոց ապրեցայց։
Շուրջ եղեն զինև երկունք մա
հու․ և ուխք անօրէնութեան խռո
վեցուցին զիս։
Վէրք դժոխոց պաշարեցին զիս․ և

ժամանեցին ինձ որոգայթք մահու։
՚Ի նեղութե իմում ես առ տր կարդա-
ցի, և առ ած իմ աղաղակեցի։
Զգեցուցեր ինձ զօրութիւն ՚ի պա-
տերազմի. և զյարուցեալսն ՚ի վր իմ
ներքոյ իմ արարեր. ալէլուիա՝
ալէլուիա։
Զթշնամիս իմ հալածական արա-
րեր. և զատելիս իմ սատակեցեր։
Աղաղակեցին, և ոչ ոք էր՝ որ փրկէր
զնոսա. կարդացին առ տր, և
ոչ լուաւ նոցա։
Մանրեցից զնս որպս փոշի առաջի հող-
մոյ. և որպս կաւ գուեհից կոխեցից զնս։
Փրկեսցէ զիս տր ՚ի հակառակութե
ժողովրդոց. և կացուսցէ զիս՝ գլ-
ուխ հեթանոսաց։
Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի, ծառայեաց
ինձ. և ՚ի լուր ականջաց լուաւ ինձ։
Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք
օտարաց մաշեցան, և կաղացան ՚ի
շաւղաց իւրեանց։
Կենդանի է տր՝ և օրհնեալ է ած.
և

և բարձր եղիցի այծ փրկութեան իմոյ։
Ո՞վ է որ խնդրէ զվրէժ իմ. և հնա-
զանդ առնէ զժողովուրդս ընդ ինև։
Փրկիչ իմ ՚ի թշնամեաց իմոց բարկա-
ցողաց. յայնցանէ որք յարուցեալ
են ՚ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս.
և յառնէ անիրաւէ փրկեսցես զիս։
Վասն՝ խոստովան եղէց քեզ ՚ի հեթանոսս.
և անուան քում սաղմոս ասացից։
Մեծ արարեր զփրկութիւն թագաւո-
րի նորա. առնել ողորմութիւն ընդ օծե-
լոյ նորա Դաւթի. և ընդ զաւակի նորա
ազգէ մինչև յազգ։

Փառք հօր և՛։ Ալէլուիայ ալէլ՟։

## Կանոնագլուխ Ութն Ութերեքհնդանէին և Նոր Կիրակէին։

Օ՛րհնեա՛ անձն իմ զտէր. օրհնե-
ցից զտէր ՚ի կեանս իմ. սաղմոս
ասացից այ իմոյ՝ մինչև եմ ես։
Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդ-
կան. զի ոչ գոյ փրկութիւն ՚ի նոսա։
Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին
անդրէն ՚ի հող. և յայնմ աւուր կո-
րի

ըկեցէն ամ խորհուրդք նր:

Երանի՛ ազգի՛ որոյ Տր Ած յակոբայ օգնակն է նմա. և յոյս նր 'ի Տր Ած է:

Որ արար զերկինս և զերկիր, զծով՛ և զամ որ 'ի նոսա:

Ո՛ պահէ զճշմարտութի յաւիտեան. և տանէ իրաւունս զրկելոց:

Տայ հաց քաղցելոց. և արձակէ ըզ կապեալս տէր:

Տէր բանայ զաչս կուրաց. և կանգնէ զգլորեալս տէր:

Տէր սիրէ զարդարս. տէր պահէ զպանդխտս. զորբս և զայրիս ըն֊ դունի տէր. և զճանապարհս ամբա րըշտաց կորուսանէ:

Թագաւորեսցէ Տր յաւիտեան, Ած քո սիոն՝ ազգէ մինչև յազգ:

Օ՛րհնեցի՛ց ը՛զ քեզ գոհու՛թե՛ 'ի կեանս իմ. սաղմոս ասցից քե՛զ:

Քրի՛ստոս Թագաւո՛ր յա՛ղթա՛կան նո՛ր երգո՛վ օրհնութեա՛մբ:

Օրհնեցէ՛ք զՏր՝ զի բարի է սաղմոս. այ մերում քաղցր եղիցի օրհնու՛թի՛:



Շի

Շինէ զերուսաղէմ տէր · և զցրո‿
ւեալսն իսրայէլի ժողովէ ։
Բժշկէ զբեկեալ սիրտս , և պատէ
զա՟մ վէրս նոցա ։
Որ թուէ զբազմութիւն աստեղաց ·
և զա՟մնեան զն՟ս յանուանէ կոչէ ։
Մեծ է տ՟ր մեր, և մեծ է զօրութի՟ն ն՟ր ·
իմաստութե՟ն ն՟ր ոչ գոյ թիւ ։
Ընդունի զհեզս տ՟ր · և խոնարհ առ‿
նէ զամբարտաւանս մինչև յերկիր ։
Օրհնեցէք զա՟ծ խոստովանութ՟բ ·
սաղմոս ասացէք նմա օրհնութ՟բ ։
Որ զգեցոյց զերկինս ամպովք · և պատ‿
րաստ արար զանձրև իւր յերկիր ։
Բուսոյց զխոտ 'ի լերինս · և զդալարի
'ի ծառայութիւն մարդկան ։
Որ տայ անասնոց կերակուր · ձագուց
ագռաւուց՝ որք կարդան առ նա ։
Ո՛չ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կա‿
մեցաւ տէր , և ոչ ընդ իրանս առն
հաճոյի հաճեցաւ ։
Այլ հաճեցաւ տ՟ր ընդ երկիւղածս
իւր · և ընդ այնոսիկ՝ որք յուսան
յողորմութիւն նորա ։

Բաղցրացին քեզ քո գոհութիւնք երկիւղածաց անուան քո. զոր յուսացուցեր ողորմութեամբ քով ի խորհուրդս կենսաբեր գալստեանդ քո։

Գովեա Երուսաղէմ ըզՏէր.
Եւ օրհնեա զԱծ քո Սիոն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Որ եդ զսահմանս քո ի խաղաղութիւն. պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթասցի պատգամ նորա։

Որ տայ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս զմոխիր ցանեաց։

Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցրտոյ նորա ո կարէ կալ։

Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա. շնչեսցէ հողմ՝ և գնասցեն ջուրք։

Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս իւր Իսրայէլի։

Ոչ այնպէս արար ամենայն ազգաց այլոց. և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

 Օ քեզ

Օ՛ քե՛զ քո՛ զոհէ եկեղեցի փըր
կեալ քո մր. ցընծալով տեսանէ ըզ
քե՛զ ըզ փրկօղդ եկեալ հայրական
իշխանութ ՚ի պըսակել ըզ մրս քո՛։

## Կանոնագլուխ Մեծի Ահաւրուն։

Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր·
ալէլուիա։ Եւ ՚ի բանից քոց
երկեաւ սիրտ իմ· ալէլուիայ։
Ցնծացայց ես ՚ի բանս քո, որպ այն՝
որ գտանէ աւար բազում։
Զմեղս ատեցի և անարգեցի, և զօ-
րէնս քո սիրեցի։
Եւթն անգամ յաւուր օրհնեցից ըզ
քեզ, վմն իրաւանց և արդարութեն քո։
Խաղաղութի բազում է այնոցիկ՝
որք սիրեն զօրէնս քո· և ոչ գոյ ՚ի
նս գայթակղութիւն։
Սպասեցի փրկութեան քում տէր,
և զպատուիրանս քո սիրեցի։
Պահեաց անձն իմ զվկայութիս քո,
և սիրեաց զնս յոյժ։
Պահեցից զպատուիրանս՝ և զվկայ-


ու-

ութիւնս քո. զի ամ ճանապարհք իմ
առաջի քո են:
Մերձեսցին խնդրուածք իմ առա
ջի քո տէր. ըստ բանի քում իմաստ_
ուն արա զիս:
Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր.
և բանիւ քով փրկեա զիս:
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւն
քո, յորժամ ուսուսցես ինձ զար_
դարութիւնս քո:
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ
պատուիրանք քո արդարութ. են:
Եղիցի ձեռն քո՛ի կեցուցանել զիս.
զի զպատուիրանս քո ընտրեցի:
Ցանկացայ փրկութեան քում տէր.
և օրէնք քո խօսք իմ էին:
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.
և իրաւունք քո օգնեսցեն ինձ:
Մոլորեցայ ես որպէս ոչխար կորու_
սեալ. խնդրեա զծառայս քո, զի ըզ
պատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Սահմանեցաւ ժամս Մեծի շաբաթու:
Պաշտեալ տէր զայս": Տես 'ի թիւն 37



Ն

Եւ դնեն զգրաչայն, և զնոր աւետարանն ի
վէր և զաջանասարանն. և ասեն երկու քահա-
նայք զսաղմոսն ՃԳ ՃԳ ձայնիւ. Ի՞նչ է զի խոսովե-
ցան հէ''. Տէր ընթացամ էջ''. Ի հարդաւ
կետոմ լոնձ''. Եւ այլն եղանակեն յայնմ. հր
ցորդ, Իշխանք ժողովեցան. Սրբեցո անգամ
ասա. զյետին բարձր.

Բայց թէ ժամանակագրութիւն ընդ սաղմոսին ա-
ռ՝ յետին գաւազանին որ է այլոց մարգարէ-
էց՝ և ասէ. Իսկ եթէ ոչ ասէ ընդ սաղմոսին
որպէս է սովորութիւն ոմանց՝ չինի ժամանա-
կէութեան ասէ, Եւ ևս խաղաղութիւն. Օրհնեալ է
և փառք. Եւ ապա պաշտօն առնի ըստ յայ-
նին. և լինի՝ հանգստեան աւետարան ըն-
թերցեալ լինի. Իսկ եթէ հանդերձ օր լինի,
համ Խաչի տօն լինի. Տէր օր անձաւ ասէ.
և խաղաղութեան աւետարան ընթերցեալ լինի.
Օ չինի աւետարանին՝ Նորոգող տիեզերաց.
այլ հոգւոց հանգուցելոց.

Իսկ ոմանք ընդ օրհնութեանն հըրդերեն զպաշ
տօնն. և լինի օրհնութեանն աւետարան ըն-
թեռնուն, և լինի հոգւոց հանգուցելոց. և
Քրիստոսի որդւոյ Աստուծոյ.



Եւրք

Իրկ. Շեառն Ներսէսի. Մայրեալ վրան
Աւետարանացն առաջ Գծէ Մրգեալն։
Ի՛շխանք ժողովեցան ՚ի միասին. վա-
սն տն և վասն օծելոյ նր։

Այսօր անճառ լուսոյն ծա-
գումն՝ ՚ի փրկութիւն մեր
կատարումն՝ խոնարհէր ՚ի
վերնատունն՝ ՚ի սուրբ առաքելական տօ-
նից լրումն. Նախ քան զընթ-
րիքն խորհրդոյ՝ սփածաւ զեն-
ջակ արկօղն լուսոյ. և Ջուր ա-
ռեալ ծառայաբար՝ զոտս լուանայր
զաշակերտացն։

Տաճարին հօր փառաց լուսոյ՝ պետ-
րոս մերժիլ յոտս ոչ ներէր. այնժամ
ձեռաց որոյ են գործք՝ երկնից եր-
կինք և երկրաւորք. որով կուրանց
աչք բացան՝ խուլք և համերք ար-
ձակեցան. որ վերածեց զինք ՚ի ծո-
վէն՝ սաստեց ալեացն և լռեցին։
Գովելոյն ընտրեալ հօտին փրկու՝
սատանէր զխորհուրդն ոչ գիտելոյ.



որով

որով դատեսցիր և հնազանդիւր՝
զոտս և ըղ գլուխս մաքրել մաղ‐
թէր՝ . գոլխոյս ասէ՝ չէ ինչ պիտոյ՝
լուացումն ջրոյ զի լուացեալ է՝ .
ոտիցըդ պէտք են մաքրուե՝ յօղիլ
'ի գլուխս սրբուե՛:

Դասուց իւրոց աշակերտաց՝ զոր
նախ բանիւ վարդապետեաց՝ . այսօր
գործով ըղ ծայրագոյն՝ եցոյց յիմ‐
քեան զխոնարհուե՝ . սպասաւորեալ
հողեղինաց՝ այն որ անտեսանէ հրեղէ‐
նաց՝ . տարեալ պաշտօն իւր ծառայիցն՝
այն որ պաշտին 'ի սրովբէից:

Եթէ տէր ըս ասէ էից՝ և վարդապե‐
տըս բոլորից՝ . զաշակերտացդ և զծա‐
ռայից՝ զոտըս լուացի 'ի հնոյ աղտից՝ .
միմեանց և դուք համբերութ՝ ցու‐
ցէք ըղնոյն խոնարհուե՝ . բարձրա‐
ցելոյն 'ի կործանումն՝ և անկելոյ
բնութեանդ կանգնումն:

Ո՞ր մաքրեցեր յաւազանին՝ մա‐
քուր ձեռօք զոտս նոցին՝ . և ուսու‐
ցեր խոնարհուե՝ յաղթող լինել չար
հրպարտին՝ . և զիմ լուա զոխղմըն

մեղաց՝ աղաչանօք սրբոյ գընդին՝ ·
և ըզ գընացս ուղղեա՛ զոտին՝ խոնար
հութբ ելևւք յերկի՛նս:

ՍԲԲԷ՞։ Մ.ԵՊԱՐԱՆ ՅՕՀ։ ՃԺԸ։ 16 · 20։
Մ.ՁՆ ՊՁՆ"։ ՎԷՐՋ, ԵՒ ԱՂԱՉԵՐԱՆ ԽՈՍ։

Երկրորդ սաղմոս 40: Երանի որ
խորհի: Որ փափագի: Պ՝ամտ ասա:
Բան անօրէնութե եդին ՚ի վերայ իմ·
տէր տէր մի՛ թողուր զիս:

Լ°լից զօրէ՛նսըն մովսիսի՝ զոր
խօսեցաւն ՚ի սինայի՝ · էկեր
ըզգաւն օրինակին՝ և ըզ բաղարջն
ընդ եղեգին՝ · ըզ հինն ՚ի նորըս փո-
խելով՝ զըստուերըն ՚ի լոյս ճըշմարտե-
լով · փոխան գառինն ինքըն գոլով՝
գառն այ նուիրելով:

Ը°նդ բաղարջի՛ն հաց անխըմոր՝
ետ ըզմարմինն իւր զերկնաւոր՝ · ըզ
կուսածինն անսերմնաւոր՝ զանապա-
կանն և զհոգևոր՝ · ընդ ոչխարին ա-
րեան ուխտին՝ ետ մեզ զարիւնն իւր
ուխտ կըրկին՝ · և եղեգան դառնա-
դունին՝ փոխան ըզ վարս ածայի՛ն:



Խա°

Թագաւո՛րըն արարածոց՝ զհացըն կե-
նաց եաքաղցելոց՝ . և ըզըբաժակն ու-
րախարար՝ որք յաղագամայ տըրտմեցե-
լոց՝ . այս նոր ուխտ է՛ իմոյ արեան՝
փոխան հընոյ ուխտին արեանց՝ . զոր
յիշատակ իմ առնիցէք՝ մինչև եկից
ես միւսանգամ։

Ժողովեցա՛ւքս ՚ի քէն հայցեմք՝ ընդ-
ժողովեալ մետասանեին՝ . որ զկենարա-
րդ քո մարմին՝ բաշխեալ ետուր ը̄
բաժակին՝ . շնորհեա՛ և մեզ ո̄ր ըն-
նուլին՝ հաղորդ լինել քում սեղա-
նին՝ . կենաց հացիդ յոր փափագիմք
և ըմպելւոյդ ում ծարաւիմք։

Ի յընտրելո՛ց աշակերտացն՝ յուդաս
մեկնեալ ՚ի սր̄բ դասուանցն՝ . զբարձօղ մե-
ղաց գառն ա̄յ՝ մատնէր ՚ի մահ ը̄ արծա-
թոյ՝ . ՚ի յընթրի՛ս հոգևոր՝ մերձի
ժըպիրհն և նենգաւորն՝ . ուտելով ը̄
վարդ̄պ̄տ՝ըն յաճախէ զխաբէութի՛ւն։

Լոյսն խօսէր՝ աղերսալի՝ խաւարե-
լոյն վասն դարձի՝ . մի ունի ՚ի ձէնջ
աւէ եղբարք՝ զիս մատնելոց է առ ՚ի
մահ՝ . պետրոս լըռ̂եալ զայն զարհու-

 րեր

րեր՝ և այն արկէր առ յովհաննէս. հարցանել թէ ով իցէ դաւանանօղ
վարդապետին ն.

Որբէ. Մեղեդւոյն Պահոց. մկ. 22.
Մերձեցաւ ձեռն բաղ՝ Վէրջ. Հաշհայտէ.
Նորոգող սաղմոս 58. Փրկեա զիս ՚ի.
Ամ մերժեցեր. Դառ ր մծ աղօ.
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց ած
ամենակալ. և ՚ի հալածչաց իմոց
ապրեցո զիս.

Սնամիմ սիրով յիւր սիրելեացն՝
ըղ ողորմութիւն փարատեաց.
Թացեալ պատու տայ յուդայն՝
նըշուակէլ գգողըն մատնիչ. զոր առ
ուեալ և մերկացուցին ամենայն հագուստն
շնորհաց. մատնեցաւ նախատակին՝
ընդ մատնուէն վարդապետին ն.
Նախագոյն լուսոյն զբրիկէլ՝ խա
ւարաւէրն արտաքս ելեալ՝ ըն
յոգունէր լոյս եղելոյն՝ ըղ գայթակ
ղենն ՚ի գիշերին. պէտրոս խօսելով իրա
խուսանելի և կըշտամբիւր հաւասա
րի. զիւրն յետ զիտխլըն ասէր և

ըղձալուստ հոգւոյն պատմէր։
Կեդրոնեան յայնկոյս ձորոյ՝ ՚ի վեր
նստուցնն եւ խորհրդոյ. էմուտ պար
տեզ ընդ պարտիզն՝ էմոյծ զադամ
յադլին դրախտին՝ . մուծցես և զմեզ
որ Է նըմին՝ ուստի հաներ նախ զա
ռաջինն՝ . զի ժառանգել ըզհայրենին՝
արժանացուք մեք վերստին՝ն։
Ծօգայր ըզ կրկ՜ ցըն տրտմաբար՝
երիցըն եղեալ առանձնաբար՝ . փըր
կել զաշխարհս հոգիս յօժար՝ բայց է
բնութ մարմնոյս տըկար՝ . ոչ ոմն ու
ժեղ և զօրաւոր՝ և ոմն անզօր վը
տանգաւոր՝ . այլ մի և նոյն գոլ միա
ւոր՝ կրկէր ըզկիրսըն կամաւոր։
Զայնիւ մաղթէր աղօթական՝ վը
իմ առ հայր խոր էական՝ . ծունըր
դընէր խոնարհական՝ որում կըրկնի
ծունր ամ՝ . եթէ փըրկիլ մարդկան
հնար է առանց մահու իմ որ գրեալ է.
բաժակ մահուս յինէն անցցէ՝ ոչ
իմ կամաւ այլ քոյդ եղցէ։
Դօղէլ յերկիւղ՜ քրտանց հոսման՝
ոլոռնաձև կայլակ վիժման՝ . ՚ի զօրա

նալ

նալ հրեշտակ մերձեալ՝ զօրինական
գիրըն լըցեալ՝ . զի կատարեսցի եւա-
զընութի՝ ա̃ծըն բան ըղ մարդկութե՝ .
պարտ էր զերկիւղ եւ զողորմութի՝
յիւրումըն կրել տնօրէնութե՛։

Սրբէ։ Նարեկացին Սաղմոս։ Ձկր։ 14 · 27։
Նա ասէ ցնա յո՞։ Վերէ, և ասա ը ը
Զորրդ սաղմոս 78։ Նա՞ մոխն հե՛։
Որ հովուեսդ։ Ծնծացէք առ ա̃ծ։
Նզքա ՚ի ձեռանէ քումմէ մերժե-
ցա՞ն . մե՞ք ժողովուրդք և խաշն
արօտի՛ քո՞։

Ճառագայթ փառաց էին՝ որ ը̃ն
բնութենըս մարդկային՝ . տագ-
նապեցար ՚ի գիշերին՝ աղօթեցեր առ
Հայր յերկինս՝ . ծագեալ ՚ի մէջ զլոյսդ-
երկնայինն՝ եւ փարատեալ զերկիւղ հա-
րին՝ . մատուցնք հոգւոյ մեր եւ մարմնին՝
յերկիւղ քո տր բեւեռեացի՛ն։

Սէրձել յուդայա որ մատնելոց՝ հան-
դերձ դասուն փարիսեցւոց՝ . անկան
նըման սատորանկելոցն՝ որք յաւիտն
չէին կանգնելոց՝ . յուդաս նենգամ-

համբուրելով՝ աւխթ մահու նըշան
տալով՝ · փոխան սիրոյ զնա մատնելով
չար ընդ բարւոյ վճարելով։

Յայնժամ տէր գթութ սիրոյն պետրոս
ըզ ծառային անուն մաղքոս՝ · էհատ
սուսերբ զականջն ոճոյ՝ որ ոչ լըւաւ
տեառըն իւրոյ՝ · իսկ տէրըն մեր արա-
գապս՝ յունկըն մերձեալ բըժըշկա-
պէս՝ · առողջացոյց ամենատէս՝ զոր
ոչ տեսին կուրացն հանդէս։

Նոր հօտին՝ փոքու ցրուեալ՝ քան
զի զհովիւըն քաջ հարեալ՝ · պետրոս
միայն ըզհետ երթեալ՝ ի յաղջկանէ
վիմին շարժեալ՝ · նշանակեալ հաւըն
խօսէր՝ առ ի պետրոս տէրն ակն ար-
կեր · զբանըն յիշէր դառն արտասուէր
ի գլորմանէն դարձեալ կանգնիւր։

Նորհեալ վիմին եկեղեցւոյ՝ զոր
պահեցեր ի հոսելոյ՝ և կանգնեցեր
ի գլորելոյ՝ վասըն սըրտին արտաս-
ուելոյ՝ · կանգնեա և զնա տէր ընդ
նորին՝ ի գլորմանէ սայթաքողին՝ ·
տալով աչացս յորդ արտասուս՝ և
ջուր նորման ծովու գըլխոյս։

Ո՞վ կամաւ զանկապելըն՝ կապեալ
ըղձեաւն արձակողըն • ՚ի յապարանօըն
տանէըն՝ կայիափայ և աննայըն • ծա_
ռայն զերեսն այն ապտակէր՝ յորմէ
սրոբէն թևապքօղէր՝ • թուք արձա
կեալ պիղծ բերանով՝ յայն որ կու_
րին լոյս ծագեաց թքո՞վն։

ՈՐԲԷ: ՆՈՐԻՆ ՄԱՂԲԷԱ: մ ձր: 26.31:

Յայնժամ ասէ ցնա: վէրջ • և փախեան:
Հինգերորդ սաղ՝ 108: Նա օրհնութե:
Նաց տր ցտր խմ: Խստացման եղ:
Խօսեցան զինէն լեզուաւ նենգա՞
ւորաւ • և բանիւ ատելու թեա՞ն
զիս պաշարեցի՞ն:

Զ՞որ կապանաց մարդկան լու_
ծիչ՝ որ կապեցար Քր կապելոյն՝ •
զիս արձակեա՞ յինքնակապէս՝ մեղաց
կապից դըժոխայնոյն՝ • որ ընդ մեղօք
պարտաւորին՝ կացեր անմեղդ ՚ի յատե
նին՝ • յորժամ փառօք գաս հայրենին՝
մի՛ դատեսցես զիս ընդ նոսին:
Պատկառանօք հինն ադամայ՝ որ ձաղ_
ղեցար վասն նորա՝ • ջընջեա զամօթ

 մե

Մեղաց լըրբին՝ որով զերեսս իմ ծած-
կեցին՝ . որ ներեցէր չար ծառային՝
ածեալ ձեռօք քեզ ապտակին՝ . հա՛ր
ուժգնակի զդեմս չարին՝ որպէս և
զիս եհար ուժգին՛ :

Սահճըն լուսո՛յ յառաւօտին՝ 'ի յուր-
բեթու հրհնոյ զատկին՝ . կայր առաջի դա-
տաւորին՝ ծո՛յն նստէր 'ի յատենին՝ .
'ի հարցանել պիղատոսի՝ տե՛րն ո՛չ ա-
նէր պատասխանի՝ . զի կանխասաց գիրըն
լըցցի՝ եղէ ես մարդ որ ո՛չ խօսի՛ :

Սամկեսկա՜ն դասք զծնու՛որայն՝ ար-
կին հանդերձ նախատանաց՝ . այնմ
որոյ զգեստն է լոյս փառաց՝ իբրև զօ-
թոց զինքեամբ արկած՝ . 'ի ծունր ի-
ջեա՛լ կատակէին՝ զգլուխն եղեգամբ
հարկանէին՝ . պըսակ 'ի փշոց բոլորե-
ին՝ ըզփուշ մեղացըն բարձողին՛ :

Սօսկալեն՜ սերոբէից՝ բառնայր ին-
քեամբ ըզփայտ խաչին՝ . մինչ 'ի տեղի
գողգոթային՝ յորում եդեալ մարդն
առաջին՝ . ետուն ըմպել գինի զմուռ-
սեալ՝ և կըռկուր լեղեաւ խառնել՝ .
որով զպըտղոյն դառըն ճաշակ՝ փո-
խեաց

խեւաց մեզ քաղցր և ախորժակ։
Մ երնականքըն զարհուրեալ՝ տե-
սին ըղտորըն մերկացեալ՝ · և ըղ հան-
դերձըն բաժանել՝ պատմուճանին
վիճակ արկեալ՝ · ըղձեռն և զոտն
ծակեցին՝ ըստ յայտնակ դաւթեան
ձայնին՝ · Ը փայտ խաչին բևեռեցին՝
զմատուանսն որ գրեց ՚ի տախտակին։
Օրհնէ։ Կոփրն Մաւրբէաւ։ յզ։26 · 57։
Լուծ հոգս չուրէաւ ձէրշ, էլոյ տառնաղէս։
Մ եցերորդ սաղ՝ 117։ Խոստովան եղե-
րուք տն · մինչև ցայն տունն որ ասէ՝

Բացէք ինձ, կցորդ։

Տ օրածեալ ձեռք ընդ ձեռաց՝
ոտք ընդ ոտից. ընթանալեաց՝ ·
փայտ Ը փայտի դաւըն պղտղոյ՝ կենք
ընդ մահու փոխարկելով՝ · ՚ի մէջ եր
կուց անօրինաց՝ կայր մերկացեալ
տուօղն օրինաց՝ · զոր ոչ տեսին ազգ-
քըն կուրաց՝ բաց ՚ի միոյն աւազակաց։
Որ ՚ի ցն արեգական՝ ըղտին ա-
րար գիշերանման՝ · զըստուերըն քօղ
արկ մերկութեան՝ զի մի տեսցէ ակն ան-

արժան՝ ․ ՚ի միջօրէ այն նըսեմացեալ՝ յոր
ժամ ադամ մեղօք մեռաւ՝ ․ ՚ի յինն
երորդն ՚ի լոյս դարձաւ՝ յորժամ
մահուամբ մահըն լուծաւ ։

Յօգնէր արտօսըր ցաւագին՝ մայր տեառն
որ կայր մերձ առ խաչին՝ ․ յորժամ լը
սէր ըզծարաւին՝ բարբառելոյ իւր
միածնին՝ ․ ետուն քացախ խառնել
լեղի՝ այնմ որ բըղխեաց գետ յա_
դենի՝ ․ եւ ՚ի վիմէն վըտակ բարի՝
արբոյց տոհմին դառնացողի ։

Խածեալ յերրորդ ժամու օձին՝
զմիտըս նախնւոյ մօրն եւայի՝ ․ ՚ի
վեցն անկել մարդն առաջին՝ համա
նական բանիւն նորին՝ ․ ՚ի սոյն ժամու
տէրն ՚ի խաչին՝ զի քաւեսցէ զմեղըս
նոցին՝ ․ եւ յորժամ ել ադամըն հին՝
եդ զաւազակն ՚ի մէջ դրախտին ։

Փառելի՝ բարբառ ընդ իմ՝ էլի էլի
առ հայր գոչէր՝ ․ զհոգին կամա
հօր աւանդէր՝ զհոգիս մարդկան
նոյն ընծայէր՝ ․ երկիր հիմամբք սա_
սանեցաւ՝ եւ վարագոյրն ՚ի մէջ հեր
ձաւ՝ ․ վէմք ՚ի յինքեանց պատառե_

ցան՝ և գերեզմանք մահու բացան։
«Ահո՛րոզի՛ 'ի սքանչելեացս՝ մեծ մարմ-
նով վասն իմ խաչեալ՝ . մեռով ընու-
թեամբըս մեռանի՝ մեծ անմահ խոս-
տովանի՝ . կըրկնավըտակ կողին աղ-
բերըք՝ եկեղեցի իւր հաստատի՝ .
Ջըրովըն մաքըրի՝ զարիւնն ըմպէ՝ զօրդի
ընդ հօր փառաւորէ։

Որբէ։ Մեծափառն Յօհան։ ՃԾԷ։ 18 . 2։
Գովերգ ձայնն։ Վերջ, հայ խօսեցաւ։

«Նորէնէրգ Ծծէ Որբոյն ցերէկին։
ո՛րոգօղ տիեզերաց՝ որ զգեցու-
ցեր մեզ լոյս փառաց՝ . արկիր ըզ
քեզ 'ի զինուորաց՝ քղամիդ կար-
միր նախատանաց՝ . մերկեա՛ յինէն
զ.քուրձ մեղաց՝ ըզորտամագոյնն արեամբ
ներկած՝ . և ըզգեցո՛ զուրախալին՝
ըզպատմուճանն իմ զառաջին։
Ս՛րբնաւո՛ր Թագաւորիդ՝ 'ի ծունր
իջեալ խաղ առնէին՝ . ծածկեալ ըզ
գլուխըդ կուփէին՝ և եղեգամբ հար-
կանէին՝ . և զիմ անկեալ մինչ 'ի գե-
տին՝ 'ի հնազանդիլ կամաց չարին՝ .

մի՛ թողուցուս խաղալ սովին՝ այլ
կանգնեսցես զիս վերստին՛:

Ըմպեալ բոլորովք քո մարմին՝ յետոյ մեր
ձրույ դժուարին՝ · սաստիկ էառ զհար
ուած գանին՝ վասն գնից նախաստեղ
ծին՝ · զիս որ յատից մինչև ցգլուխ՝
ցաւովք նեղիմ անհընարին՝ · առողջացո՛
դարձեալ կրկին՝ ով շնորհաց յառ ճին՛:

Սրբափայլ պճնեալ զարդուն՝ զոր
զգեցուցեր ահարոնին՝ · փոխան պըր
սակ 'ի փշոց եդին՝ մշակք այգւոյն
խարդախին՝ · ըզ փուշ մեղաց հանցես
յինէն՝ զոր յիս էհար իմ թշնամին՝ ·
և ողջացո զխայթուած վէրին՝ զի
ապէք մեղացըն ջընջեսցին՛:

Ուրբթ: Նշխարն Սաղբէսա: յժը: 27 · I:
Իբրև այգ էղև: վերըջ, և մայր որբոցն վէ":

Լ°ռուն ըմպե՞լ քեզ ըզլեղին՝ և ըզ
քացախն 'ի ծարաւ ին՝ · արբեր կա
մաւ զի քաղցրացին՝ ճաշակք ապրո
ղոյն դառնադոնին՝ · ըզդ առնու թ
թունաւորին՝ զոր 'ի մասունս հոգւոյս
արկին՝ · հերքեա 'ի բաց հանդերձ ստ


վին

վին՝ և քաղցրացի սէր քո 'ի սմին։
Ստեղնէլ ծառոյ մահաբերին՝ այնմ
որ բուսաւ 'ի մէջ դրախտին՝ ։ փոխան
բարձեր ըզփայտ խաչին՝ 'ի գողգոթայ
հանեալ տեղին՝ ։ զեմ առ 'ի մեզս ան
կէլ զոգի՝ և ծանրագոյն բարձող բե-
ռին՝ ։ բարձ 'ի յուսիդ ըստ ոչխարին՝
հան 'ի յերկինս յուխտեալ տեղին։
Ի յուրբաթու ժամ երրորդին՝ բե-
ւեռեցար տէր 'ի խաչին՝ ։ լուծեր զկա-
պանս նախաստեղծին՝ և կապեցեր
ըզթշնամին՝ ։ զիս ամրացո ընդ հովա-
նեաւ՝ կենդանարար քո նշանին՝ ։
և 'ի ծագին յարևելից՝ լուսաւո-
րեա լուսով նորին։
Երանեալ աւազակին՝ բացեր ըզ-
դուռն ադին դրախտին՝ ըստ հաւ-
ատոյ սրտի նորին՝ կատարեցեր ըզ-
խնդրելին՝ ։ տուր և ինձ տէր ընդ նո-
մին՝ լսել ըզ նոյն պատասխանին՝ ։
այսօր ընդ իս իցես յադին՝ 'ի հայրե-
նիս քո առաջին։

Ընթերց։ Յաւետարան Մարկոսի։ Ձղը։ 15.2։
Եւ [illegible]։ Հէրձ, ելեալ ելին յերէ։



Բար

Բա՛րբառելով զէլն էլին՝ հիմունք
երկրի տատանէին՝. և վարագոյր
հին օրինին՝ վերուստ ՚ի վայր պատա
ռէին՝. արդ ընդ վիմացն որք շարժէ
ին՝ շարժեա զանշարժ սիրտս ՚ի բա
րին՝. ընդ պատառիլ վարագուրին՝
զիմ պատառեա ըզգիր պարտին՛:
Ա՛րեգական լոյս քող արկեալ՝ խա
ւարինայր միջօրէին՝. և գերեզմանք
բանային՝ մարմինք սրբոցն յառնէ
ին՝. ընդ խաւարիլ լուսաւորացն՝
մաքրեա յինէն զգործ խաւարին՝.
ընդ մեռելոցն որք յառնէին՝ կանգ
նեա զմեղօք մեռեալ հոգիս:
Նո՛ր սիրոյ պատուիրանին՝ գործով
ըզցոյց եղեր բանին՝. աղօթելով առ
հայր յերկինս՝ թողուլ ըզ մեղս որ
՚ի խաչին՝. ինձ որ հոգւովս հաւատա
ցեալ՝ երկրպագեմ քեզ միածին՝.
Թո՛ղ ըզ լուծումըն հրամանին՝ մի՛
յիշեսցիս մեղքն առաջին՛:
Սա՛րսեցին սանդարամետք՝ ՚ի յաւան
դելն առ հայր զհոգիդ՝. որ ՚ի դժոխս
իջեր ներքին՝ ՚ի բանտ մահու և խա


ւա

ւորին՝ . կապեալ զիշխանըն մահա-
ծին՝ հաներ զհոգիսն որք՚ի բանտին՝ .
և զիս հանցես տր ընդ նոսին՝ բան-
տէ մեղացն աղջամղջին։

ՈՒՐԲԹ. Գ. ԵՔՇՐՆ Գ ձայն. մղէ. 27. 66.
ՆՈՐ ՏԻՐՈՋ ԱՅԳ ԵՂԵՒ. ՁԵՌՔ, ՏԵՍԱՆԷԻՆ ՂԱՅՆ.

Ո՛ղբերանցն անձկան՝ որ յետ մա-
հուն անմահութեար՝ . բղխեալ ՚ի
քէն վտակ կրոկին՝ ՚ի նորոգումն
կուսածնին՝ . բաց ողբերան իմ յար-
բուցումն քոյ արեան կենսաբարին՝ .
ընծայ դարձեալ յաւազանին՝ թէ ոչ
շնորհօք այլ արտասուօք։

Յամենահիւթ մեռանելոյ՝ զմեռեալ հո-
գիս կենդանացո՝ . թաղմամբ ՚ի նոր
գերեզմանի՝ զթաղեալս ՚ի մեղս վե-
րածեա՝ . ՚ի դրի ներքնումն իջանե-
լով ՚ի դրոյ մեղաց վերաբերեա՝ .
՚ի տունէր մահուքո բնակելով լու-
սաւորեա և զիս հոգւով։

Սո՛րա իմ առ քեզ աղաղակէ՝ բանդ
որ Է հօր ՚ի սկրզբանէ՝ . որ կամաւոր
վասըն մարդկան՝ կրեցեր մարմնով

զայս ամ՟՝ . Ինձ լսելի արա ըղձոյն՝
յարքայութե̃նդ քո կոչման՝ . ընդ
ժողովոց անդ անդրանկացն՝ օրհնել
ըզքեզ միշտ յաւիտեան՛։

Ո չինէ Ահ ցաօք անճառելին առ ատեամն եր-
ցորդ, Լուսնեցաւ աս՟. փառք՝ Ի հայր
դաւ իմաստ շնորհք՟։
Սա ապա ընթերցեալ լինի աւետարան խաչէ
ըսթէ̄ ըստ յայնէն։ և լինի առ շարական՝ Սո
րոգոշ։ Իսկ ոմանք շաւետարանի շարականն ի
այն աւուրն. և ոմանք զնորոգօղն համայն աւուրն։
յամս ջոյ է. Իսայի յորժամ շաղաշտամին շարա-
կանն Հանգստեան աւուր՝ լինի շարականացն
առ ատյման ըստ յայնեն. և ընթերցեալ լինի
աւետարան ըստ յայնէն. և լինի աւետարանէն
առ յԱՀճանելէն փոխ մ։ լինի ոծանելէն՝
Հոգւոյ հանգուցելոյ. Սա ոմանք ըստ ոծ
անելին երբեմն երբեմն նյորդեն ԱՀրանէն
և մարդասէր լի փուննն. և յամ Սո աստցէն
լի փուն. յամս ջո է։ Սա ապա Հոգւոյ հան
գու"։ Ողո̄ որդի ած. և Հայր
մեր որ յեր"։

Սաղմոսք ըստ յաւուրցն նախ քան զատուրնն։
Տէրունի աւուրց։

Տէր ող՛ կացցէ ՚ի՛։ տես 384 երեսն։

Տէ՛ր՝ մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։ Ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր՝ մինչև յե՞րբ։ Դարձ Տէր և փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէ՛ր՝ ըստ ողորմութեան քում։ Զի ո՛չ ոք է՝ որ ՚ի մահու յիշէ զքեզ. կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։ Վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմում. լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես ՚ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։ Ի բաց կացէք յինէն ամենեքեան. որք գործէք զանօրէնութիւն։ Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ Տէր աղօթից իմոց, և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։ Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամ

Թշնամիք իմ. դարձցին յետս և ա-
մաչեսցեն յոյժ վաղվաղակի և
խռովեսցին:

Բարձր առնեմ զքեզ Տէր, զի ընկա-
լար զիս. և ոչ ուրախ արարեր
զթշնամիս իմ յիս:

Տէր Աստուած իմ՝ կարդացի առ քեզ, և
բժշկեցեր զիս. Տէր հաներ ՚ի դժո-
խոց զանձն իմ. և փրկեցեր զիս յայն-
ցանէ, որք իջանեն ՚ի գուբ:

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք Նորա. և խոստո-
վան եղերուք յիշատակի սրբութեան Նորա:

Սրտմտութիւն է ՚ի բարկութեան Նորա. և
կեանք են ՚ի կամաց Նորա:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. ա-
ռաւօտու եղիցի ուրախութիւն:

Ես ասացի ՚ի բարեկենդանութեան ի-
մում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան:

Տէր ՚ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօ-
րութիւն, դարձուցեր զերեսս քո յի-
նէն՝ և ես եղէ խռովեալ:

Առ քեզ Տէր կարդացի, և առ Աստուած
իմ աղաղակեցի. զինչ օգուտ է քեզ
յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապա-
կանութիւն:

Միթէ հող խոստովան առնիցի առ քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւն քո։

Լուաւ ինձ Տէր՝ եւ ողորմեցաւ. եւ Տէր եղեւ ինձ օգնական։

Դարձուցեր զսուգ իմ յուրախութիւն, եհերձ յինէն զքուրձ. եւ ինձ զգեցոյց զուրախութիւն։

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ. եւ այլ մի՛ եւս զղջացայց. Տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ։

Աստուած յանուան քում կեցո զիս, եւ ՚ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած լուր աղօթից իմոց. ունկնդիր լեր բանից բերանոյ իմոյ։

Զի օտարք յարեան ՚ի վերայ իմ. եւ հզօրք խնդրեցին զանձն իմ, եւ ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ. եւ Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Դարձուսցանէ զչարն ՚ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեսջիր զնոսա։

Կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. եւ խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է։

 Զի ամ

Յա̃մ նեղութ̃է իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Ա̃Ծ ողորմեա մեզ և օրհնեա զմեզ. երևեցո զերեսս քո ՚ի մեզ՝ և ողորմեա մեզ։ ԿԶ

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգս ա̃մ զփրկութ̃իս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ա̃Ծ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա̃մ։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազգք. զի դու դատես զժողովուրդս ուղղութ̃բ. և զազգս երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ա̃Ծ. գոհասցին զքէն ժողովուրդք ա̃մ։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեսցէ զմեզ Ա̃Ծ Ա̃Ծ մեր։

Ա̃Ծ մեր օրհնեսցէ զմեզ, և ՚ի նմանէ երկիցեն ա̃մ ծագք երկրի։

Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութ̃ի յակոբայ։ ՁԴ

Թողեր զանիրաւութ̃ի ժողովրդեան քո, և ծածկեցեր զա̃մ մեղս ն̃ց։



Լռ

Լուեցուցեր զա՟մ սրտմտութիւն քո, և
դարձար ՚ի բարկուէ՟ սրտմտուե՟ քո։
Դարձ առ մեզ Ա՟ծ փրկիչ մեր, և
դարձո՛ զսրտմտութիւն քո ՚ի մէնջ։
Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տ՟ր.
և մի՛ ձգեր զբարկութի՟ քո ազգէ
մինչև յազգ։
Ա՟յ դու դարձե՟լ կեցուսցես զմեզ. և
ժողովուրդ քո ուրախ եղիցի ՚ի քեզ։
Ցո՛յց մեզ Տ՟ր զողորմութիւն քո,
և զփրկութիւն քո տո՛ւր մեզ։
Լուայց զի՞նչ խօսի Տ՟ր Ա՟ծ մեր. խօ-
սեսցի զխաղաղութի՟ ժողովրդեան
իւրոյ առ ս՟րբս իւր՝ և առ այնոսիկ,
որք դարձե՟լ են առ նա սրտիւք։
Այսուհետև մերձ է առ երկիւղածս իւր
փրկութի՟ ն՟ր. բնակել փառաց ն՟ր
յերկրի մերում։
Ողորմութի՟ և ճշմարտութի՟ պատա-
հեսցին. արդարութի՟ և խաղաղութի՟
համբուրեսցին։
Ճշմարտութի՟ յերկրէ բուսաւ. ար-
դարութի՟ յերկնից երևեցաւ։
Տ՟ր տացէ զքաղցրութի՟, և երկիր

մեր տացէ զպտուղ իւր · արդարութ
առաջի նր գնասցէ · դիցէ 'ի ճանա
պարհի զգնացս իւր։ գկ

Տէ՛ր՝ լուր աղօթից իմոց · աղաղակ
իմ առ քեզ եկեսցէ · և մի՛ դար-
ձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութե իմոյ՝ խոնարհեցո՛
առ իս զունկն քո · յորում աւուր կար
դամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան ոպ ծուխ աւուրք իմ ·
և ոսկերք իմ ոպ խուիւ չորացան։

Հարայ ես ոպ խոտ՝ և ցամաքեցաւ
սիրտ իմ · մոռացայ ուտել զհաց իմ
'ի ձայնէ հեծութե իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ · Նը
մանեցայ ես հաւալուսն անապատի։

Եղէ ես ոպ բու յաւերակի · տքնեցայ՝
և եղէ ես ոպ ճնճղուկ միայն 'ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհա
նապազ · և գովիչք իմ ինև երդնուին։

Զմոխիր ոպ զհաց կերի · և զըմպե-
լին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտու
թեան քո, զի դու բարձրացուցեր

և խոնարհեցուցեր զիս։
Աւուրք իմ ոպ̃ հովանի անցին. և
ես ոպ̃ խոտ ցամաքեցայ։
Դու տ̃ր յաւիտեան կաս, և յիշա-
տակ քո ազգէ մինչև յազգ։
Դու յարուցեալ գթասցիս ՚ի վ̃ր
սիոնի. ժամանակ գթալոյ նորա
հասեալ է ժամ։
գձ Մերձեսցին խնդրուածք իմ առա
ջի քո տ̃ր. ըստ բանի քում իմաս
տուն արա զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̃ր.
և բանիւ քով փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութ̃իւ
քո, յորժամ ուսուսցես ինձ զար-
դարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա̃մ
պատուիրանք քո արդարութ̃ են։
Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս.
զի զպատուիրանս քո ընտրեցի։
Ցանկացայ փրկութեան քում տ̃ր.
և օրէնք քո խօսք իմ էին։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.
և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

 Մո

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Տէրունի առաւօտուն։ ձայն 6։

Ի խորոց կարդացի"։ տես 280 երեսն։

Տէր՝ լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։ Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։ Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկենս իմ. և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։ Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս։ Յիշեցի զաւուրս առաջինս. խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։ Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. փութապէս լուր ինձ տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցայ այնոցիկ, որք իջանեն ՚ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմ

մութիւն քո · զի ես 'ի քեզ տէր յուսացայ։
Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից · զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։
Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տէր · զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել զկամս քո · զի դու ես Աստուած իմ։
Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տէր՝ կեցուսցես զիս · արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ. և կորո զամենայն նեղիչս անձին իմոյ · զի ես ծառայ քո եմ։

Օրհնի Աստուածոյ՝ ընթերցուածներն առաւօտուն ըստ ձայնին։

Աւե. Մատթէոսի [illegible] Առաքելոյ։

13 · 16։

Բկ Յայնժամ թողեալ զժողովուրդսն, եկն 'ի տուն. մա-
Գկ տուցան առ նա աշակերտքն
իւր՝ և ասեն . Մեկնեա մեզ զառակ



որոմ

որոմանցն ագարակի: Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա· որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի մարդոյ: Եւ ագարակն աշխարհս է· սերմն բարի նոքա են, որք որդիքն արքայութեան են· իսկ որոմն որդիք չարին են: Եւ թշնամին որ վարեաց զայն, սատանայ է· և հունձն կատարած աշխարհիս է· և հնձօղքն հրեշտակք են: Որպէս ժողովի որոմն և ՚ի հուր այրի· այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս:

Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր· և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւն՝ և զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն: Եւ արկցեն զնոսա ՚ի հնոց հրոյ· անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց:

Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից· որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի՝ զոր գտեալ մարդոյ թաքոյց՝ և ՚ի խնդութենէ անտի երթայ վաճա_



ռէ

ւէ զա̃մ ինչ՝ զոր ունի. և գնէ զա-
գարակն զայն։ Դարձեալ՝ նման է
արքայութ̃ի երկնից առն վաճառակա
նի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղե
ցիկս։ Եւ գտեալ մի պատուական
մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զա̃մ
զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն մար
գարիտ։ Դարձեալ՝ նման է արքայ
ութ̃ի երկնից ուռկանի արկելոյ 'ի
ծով՝ և յա̃մ ազգաց ժողովելոյ։
Որ իբրև լցաւ, հանեալ 'ի ցամաք՝
և նստեալ ժողովեցին զբարի բարին
յամանս՝ և զխոտանն 'ի բաց ընկեցին։
Այնպէս եղիցի 'ի կատարածի աշ
խարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկ
նեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց։
Եւ արկցեն զն̃ա 'ի հնոց հրոյ. անդ
եղիցի լալ և կրճել ատամանց։
Ասէ ցնոսա յ̃ս՝ իմացայք զայս ա̃մ.
ասեն ցնա. այո̃ տ̃ր։ Եւ նա ասէ
ցն̃ա՝ վ̃ն այսորիկ՝ ա̃մ դպիր աշակեր
տեալ արքայութ̃ե երկնից՝ նման է առն
տանուտեառն, որ հանէ 'ի գանձէ
իւրմէ զնոր և զհին։

Եւ ասէր՝ այսպէս է արքայութիւն այ. ոպ զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր։ Եւ ննջիցէ, և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և նա ոչ գիտէ։ Զի երկիրն ինքնին բերէ զպտուղն. նախ զխոտն՝ և ապա զհասկն՝ ապա զցորեան ատոք՝ ի հասկին։ Եւ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ՝ զի հասեալ են հունձք։ ըճ

դ

Եւ ասէր. ըմ նմանեցուսցուք զարքայութիւն այ. կամ որով առակաւ առակեսցուք զնա։ Ոպ հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի՝ փոքրագոյն է քան զամ սերմանիս՝ որք են յերկրի։ Եւ յորժամ սերմանիցի, բուսանի, և լինի մեծ քան զամ բանջար. և արձակէ ոստս մեծամեծս մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նր թռչնոց երկնից բնակել։ Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նս զբանն, ոպ կարող լինէին լսել։

Եւ առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նս · բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամ։

## Աւ. Սրբոյն Յի. Քի. որ ըստ Ղուկասու։

12 · 32։

ակ
գկ

Գոհացարուք զՏէրն որ բարով ո_ղորմութե՛ն առաջնորդեաց մեզ ՚ի գործս աւուրնջեան. և շնորհեաց մեզ միաբան գալ հասանել ՚ի հանգիստ գիշերիս: Այլ մեք յամ ժամ աղա_չեսցուք զմարդասէրն Ած լինել պա_հապան անձանց մերոց. և նա բարով ողորմութե՛ն պահեսցէ զմեզ. և ա_ռաջնորդել հասուսցէ յիւր բարու_թե հանգիստն. զոր խոստացաւ սի_րելեաց իւրոց ճշմարիտն Ած յս քս

Տէրն ամենակալ կեցուս":

Զհանգիստ գիշերիս խաղաղու":

Զհրեշտակ խա": Զքաւութի":

Զըեյ խա": Այս ևս միա": Զան":

Ողորմեա՛ց մեզ":

Տէր բարերար որ մեծաւ գթութե քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեամբ աշ՛խա_տելոցն. և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտա_ժանեալսն մեղօք՝ հանգիստ նց խոս_տանալով: Շնորհեա՛ և մեզ տէր ան_

խռով խաղաղութ՟ զգիշերս անցու-
ցանել. և 'ի ծանրութ՟է մեղաց զաղ-
խատեալքս՝ ապաշխարողութեամ ողորմութ՟
քով. և արժանաւորեա մշտնջենաւոր
հանգստեանն ընդ ա՟մ ս՟րբս քո:
Ու գոհանալով փառաւորեսցուք
զքեզ ը՟ հօր և ամենասուրբ հոգւոյդ:
Այժմ և միշտ և":

Խաղաղականն Աղօթեան:

Վարդապետ բարեաց և աղբիւր
խաղաղութ՟ն ո՟ր ա՟ծ մեր յա՟մ սատա-
նայական խռովութ՟ց խաղաղացո ըզ-
միտս մեր և զխորհուրդս 'ի գիշերիս
յայսմիկ և յա՟մ ժամանակի: Ա՟պ զի
առաջնորդեալք յանցաւոր կենցա-
ղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական
երկնից արքայութ՟ քո. զոր պատրաս
տեցեր 'ի սկզբանէ ա՟շի ս՟րբց քոց:
Ու ընդ նոսին գոհանալով փ՟րբե-
ցուք զհայր և զորդի և զս՟բ հ՟ո":

---

Սաղմոս, 26:

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ ես յումմէ՞
երկնեայց. տ՟ր ապաւէն կենաց իմոց՝
ես յումմէ՞ դողացայց:

՚Ի մերձենալ առ իս չարաց՝ ուտել զմարմին իմ. նեղիչք իմ և թշնամիք իմ, նոքա տկարացան և անկան։

Եթէ պատրաստեսցի ՚ի վերայ իմ պատերազմ, ո՛չ երկիցէ սիրտ իմ. և թէ յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ ՚ի քեզ տէր յուսացայ։

Զմի խնդրեցի ՚ի տեառնէ, և զայն աղաչեմ. բնակել ինձ ՚ի տան տեառն զամենայն աւուրս կենաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութիւն տեառն. և հրաման տալ ՚ի տաճարի նորա։

Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ արար զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում։

՚Ի վէմ բարձր արար զիս. և այժմ բարձր արար զգլուխ իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց։

Շուրջ եկեց և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութեան. օրհնեցից և սաղմոս ասացից տեառն։

Լո՛ւր տէր ձայնի իմում զի կարդացի առ քեզ. ողորմեա ինձ և լո՛ւր ինձ՝ զի քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին ե_



րեսք

րեսք իմ՝ զերեսս քո տ̅ր խնդրեցին։
Մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն. և մի՛ խոտորիր բարկութ̅բ ՚ի
ծառայէ քումմէ։
Օգնական իմ լե՛ր տ̅ր՝ մի՛ անարգեր
զիս. և մի՛ թողուր զիս ա̅ծ փրկիչ իմ։
Հայր իմ և մայր իմ թողին զիս. և
տ̅ր իմ ընկալաւ զիս։
Օրէնսդիր արա զիս տ̅ր ՚ի ճանա-
պարհի քում. և առաջնորդեա ինձ
՚ի շաւիղս քո ուղիղս։
Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ
զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց։
Յարեան ՚ի վ̅ր իմ վկայք մեղաց. և
ստեցին ինձ յանօրէնութ̅ն իւրեանց։
Հաւատացի տեսանել զբարութ̅ն տ̅ն
յերկրին կենդանեաց. համբե՛ր տ̅ն
և քաջալերեա՛ց. զօրասցի՛ սիրտ քո և
համբե՛ր տ̅ն։ Փառք Հօր"։

---

## Նոյն Տեառն Աստուծոյ։

այլև սիրով հայրդ գըթած
է՛ քո ստեղծեալ գործըս ձե-
ռաց՝ և ըղըանակս հրեշտա-
կաց

կաց՝ տո՛ւր պահապան մեզ տըլկիրայցս՝ .
փրկեա́ զանձինս ՚ի փորձանաց՝ ՚ի խա-
ւարէ շրջօղ դիւաց՝ . ղր̄ ՚ի տուըն-
ջեան և գիշերի՝ տացուք քեզ փառս
անլռելի։ Լոյն անեղ անըսկ՛զ-
բան՝ ծընունդ անճառ որդի և բան՝ .
որ արարեր ըզ տիէ̂ գործոյ՝ և ը՛զ
գիշեր ՚ի հանգիստ քնոյ՝ . տո՛ւր ՚ի նըն-
ջել աչաց մարմնոյ՝ արթուն լինիլ
մեզ ըստ հոգւոյ՝ . ղր̄։ Րաբուն հո-
գւոց բանաւորաց՝ աղբիւր լուսոյ
բաշխօղ շնորհաց՝ . ՚ի փակիլ դըռանց
ընութենց մարմնոց՝ լո՛յս տուր աչաց
սըրտից մերոց՝ . ՚ի գիշերայց առ քեզ
կանխել՝ ընդ հրեղինացն օրհնաբա-
նել՝ . ղր̄։ Սուրբըդ սրբոց երրոր-
դու՝ ըզ մեզ մաքրեա́ քեզ բնակու-
թե՝ . շնորհեա́ ը՛նդ մանկանցն առա-
գաստի՝ հանգչիլ ընդ քեզ ՚ի յան-
կողնի՝ . տո՛ւր ըզհայցուած բարեկա-
մին՝ ըզփոխ երից նըկանակին՝ . ղր̄։
Երևելն լոյս ըստեղծեր՝ զտիւ և
ըզգիշեր բաժանեցեր՝ . ծագեա́ մեզ
ա̄ր ՚ի գիշերի՝ ըզճառագայթս իմա-
նա

նայլի՝ · տուրյամ ժամանակի՝ զպահ
պանող աջ քո հովանի՝ · զի՛ ։ Սրբոյ քո
հուր արկեալ յերկիր՝ բորբոքեսցի
՚ի հոգիս մեր՝ · զխորհուրդ սրտից
մեր մաքրեսցէ՝ զլոյս գիտութեան
քո փայլեսցէ՝ · ՚ի քնոյ մահու զմեզ
զարթուսցէ՝ զմտաց բոցով քո մա
ուեսցէ՝ · զի՛ ։ ՚Ի քեզ նայիմք լոյս
անմատոյց՝ ՚ի զգայական ծածկեալ
լուսոյ՝ · որ վասն մեր եղար ՚ի գրի
և ննջեցեր ՚ի տապանի · առ մեզ ննջ
ջեմ արթուն բնութի՝ հերքեա զչա
րին ներգործութի՝ · զի՛ ։ Խնդ լու
սոյ անստուերի՝ պաղատանօք կամք
առաջի՝ · որ փակեալ դրամբք յերե
կոյին՝ երևեցար մտասանին՝ · ընդ
Թօմայի առ քեզ գոչեմք՝ տր և նծ
զքեզ դաւանեմք՝ · էջ և առ մեզ յերե
կոյիս՝ և տուր զողջոյն քո ՚ի հոգիս ։
Ն՝ամեալքս ընդ քեզ տր աղաչեմք՝ մեզ
յօգնութի նայեաց հայցեմք՝ · պահա
պանող խորոյէլի՝ անձանց մերոց լեր
հովանի · օթեամ առ մեզ խաղաղարար
զի ննջեսցուք անխռովաբար՝ · և՛



ընդ

ընդ առաւօտըս կանխեսցուք՝ օրհ-
նել զքեզ ընդ հօր հոգւոյն։
Գոչման փողոյն զարթիցեն որ ՚ի վերջ
նուագին գիշերի՝ · լըսել արամ զմեզ ար-
ժանի՝ և յաջակողմն օդեաց դասի՝ ·
անշէջ վառեալ զլոյս լապտերաց՝ ըստ
իմաստուն հինգ կուսանաց՝ · զի՛ ընդ
փեսային ՚ի յարագաստ՝ հարսունք
հոգւով մըտցուք ՚ի փառս։
Զմլածեամ ՚ի մէնջ տէր նըշանաւ խա-
չի քոյ՝ · զընդդիմամարտ և զաներև-
ոյթ գազանն՝ · և՛ մի՛ տար յապակա-
նութիւն զքո ժառանգութիւնս։
Բարեխօսեա՛ վասըն մեր Աստուածածին
մարիամ՝ · որ ծընար զտէր աստուած
որ հոլովէ ըրըն զերկին՝ · ա՛ մենամօր և
զքանչելեն մամուզքն խորհէք։
Մեղրան։
Տէր՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն։ Տէր բարերար աղաչեմ զքեզ
օգնական իմ լեր։ Տէր՝ մի՛ անարգեր
զիս· և մի՛ թողուր զիս Աստ փրկիչ իմ։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն Աստուած և խնդրեսցուք ՚ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս․ ՚ի գիշերական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կատարումն Ժմնկի ամաց մերոց։ ամէն։

Աղօթ։

Շնորհատու բարերարդ՝ յոժի առատ անմահ Տէր․ աղաչեմք զքեզ փարատեա յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս․ ՚ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ և շնորհեա մեզ հաստատով ապաւինել յամենասուրբ Երրորդութիւնդ ՚ի հայր և յորդի և ՚ի սուրբ հոգիդ այժմ և։

Սաղմոս, 118։

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի, և ոյք գնան յօրէնս Տեառն։ Երանելի, ոյք քննեն զվկայութիւնս նորա․ բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա։

Ո՛չ թէ ոյք գործեն զանօրէնութիւն,
՚ի ճանապարհս նորա գնացին: Դու
պատուիրեցեր զպատուիրանս քո՝ ՚ի
պահել յոյժ: Երանի թէ յաջո
ղեալ էին ինձ ճանապարհք իմ, ՚ի պա
հել ինձ զարդարութիւնս քո: Յայն
ժամ ես ոչ ամաչէի, ՚ի զգուշանալ
ինձ ՚ի պատուիրանս քո: Խոստովան
եղէց քեզ տէր յուղղութիւն սրտի իմոյ.
որպէս ուսայց զիրաւունս արդարու
թեան քո: Զիրաւունս քո պահեցից,
մի՛ թողուր զիս մինչ իսպառ:
Իւ՞ ուղղեսցէ երիտասարդ զճանա
պարհս իւր. այլ ՚ի պահել զբանս քո:
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի ըզ
քեզ. մի՛ մերժեր զիս ՚ի պատուիրա
նաց քոց: ՚Ի սրտի իմում թագուցի
զբանս քո, որպէս զի մի՛ մեղայց քեզ:
Օրհնեալ ես դու տէր. ուսո՛ ինձ զար
դարութիւնս քո: Շրթամբք իմովք
պատմեցից զամենայն իրաւունս բերանոյ
քոյ: ՚Ի ճանապարհս վկայութեանց քոց
զուարճացայ, որպէս յամենայն ՚ի մեծութեան:
՚Ի պատուիրանս քո հոգացայց, և

զգուշացայ 'ի ճանապարհս քո։
Զիրաւունս քո խօսեցայ, և ոչ մոռացայ զբանս քո։ Հատո՛ ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։ Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց 'ի սքանչելիս օրինաց քոց։
Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛ թաքուցաներ յինէն զպատուիրանս քո։
Փափագեաց անձն իմ, 'ի ցանկալ յինձ յիրաւունս քո յամ ժամ։ Սաստեցեր ամբարտաւանից. անիծեա՛լ որք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց։
'Ի բա՛ց արա յինէն զնախատինս և զարհամարհանս. զի զվկայութիւնս քո խնդրեցի։ Զի նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։
Զի վկայութիւնք քո խօսք իմ էին. և խորհուրդք իմ յարդարութի քո։
Մերձեցաւ անձն իմ 'ի հող. տէր կեցո՛ զիս ըստ բանի քում։
Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ. ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։
'Ի [illegible]նապարհս արդարութեանց քոց



իմաս

իմաստուն արա զիս • և քննեցից զս
քանչելիս քո։ Տքնեցաւ անձն իմ առ
ի ձանձրանալ • հաստատեա զիս ի բանս
քո։ Զճանապարհս մեղաց ի բաց
արա յինէն • և յօրէնս քո ողորմեա
ինձ։ Զճանապարհս ճշմարտութե՟
քո ընտրեցի • և զիրաւունս քո ես ոչ
մոռացայ։ Մերձեցայ ես ի վկայու-
թիս քո, տ՟ր մի՛ յամօթ առներ զիս։
Ի ճանապարհս պատուիրանաց քոց
ընթացայ • զի անդորր արարեր սր
տի իմոյ։ Օրէնսդիր արա զիս տ՟ր,
ի ճանապարհս իրաւանց քոց • և
խնդրեցից զնա յա՟մ ժամ։
Իմաստուն արա զիս • և քննեցից
զօրէնս քո, և պահեցից զնա բոլորով
սրտիւ իմով։ Առաջնորդեա ինձ ի
շաւիղս պատուիրանաց քոց • զի ընդ
նա՟ հաճեցայ։ Խոնարհեցո՛ զսիրտ իմ
ի վկայութիս քո, և մի՛ յագահութի՟։
Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից զնան
րութի՟ • ի ճանապարհս քո կեցո՛ զիս։
Հաստատեա ծառայի քում՝ զբանս քո
յերկիւղ քո։ Հան յինէն զնախա-



տինս

տինս, զոր և կարծեցի․ զի դատաս-
տանք քո քաղցր են։ Ահա ցանկացայ
պատուիրանաց քոց, յարդարութեան
քում կեցո զիս։
Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո տէր․
և փրկութիւն քո ըստ բանի քում։
Տաց պատասխանի ոյք նախատեն զիս
բանիւք․ զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ
իմմէ զբան ճշմարտութեան մինչև
յոյժ․ զի յիրաւունս քո յուսացայ։
Պահեցից զօրէնս քո յամենայն ժամ յաւի-
տեան՝ և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրու․ զի զպատ-
ուիրանս քո խնդրեցի։ Խօսէի ըզ-
վկայութիւնս քո առաջի թագաւորաց,
և ոչ ամաչէի։ Խորհէի ՚ի պատուի-
րանս քո, զոր սիրեցի։ Համբարձի
զձեռս իմ ՚ի պատուիրանս քո՝ զոր սի-
րեցի․ և խորհէի յարդարութեան քում։
Յիշեա զբան ծառայի քո, յոր և
յուսացուցեր զիս։ Սա մխիթարես-
ցէ զիս ՚ի խոնարհութեան իմում․
զի բան քո կեցոյց զիս։


Մ

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։ Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և ոյք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո, 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։

Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Բաժին իմ ես դու Տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։ Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում։ Խորհեցայ 'ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո։ Պատրաստեցայ՝ և ոչ խռովեցայ. զի պահեցի զպատուիրանս քո։

Տառունք մեղաց պատեցան զինև. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

'Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լի-



նել

նիլ առ քեզ վասն խրատանց և ար_
դարութեան քո։ Հաղորդ էի ես ամ
երկիւղածաց քոց. որոց պահեալ
էին զպատուիրանս քո։
Ողորմութեամբ տն լի եղև երկիր.
զարդարութիւնս քո ուսո ինձ։
Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի
քում տր, ըստ բանի քում։
Զքաղցրութիւն, զխրատ, և զգիտութիւն ու_
սո ինձ. զի ի պատուիրանս քո ես հա_
ւատացի։ Մինչև խոնարհեալ էի ես
մեղայ. վասն զբանս քո պահեցի այժմ։
Քաղցր ես դու տր, և քաղցրութեամբ
քով ուսո ինձ զարդարութիւնս քո։
Բազմացան յիս անիրաւութիւնք ամ_
բարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ
իմով քննեցի զպատուիրանս քո։
Մածան որպէս կաթն սիրտք նոցա.
այլ ես զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս.
ոչ ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քոյ,
քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին և ստեղծին զիս

 իմաս

իմաստո՛ւն արա զիս և ուսայց զպա-
տուիրանս քո։ Երկիւղածք քո տես-
ցեն զիս՝ և ուրախ եղիցին. զի ես 'ի
բանս քո յուսացայ։ Ծանեայ տ̃ր՝ զի
արդարութի̃ են դատաստանք քո.
յիրաւի՛ խոնարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութի̃ քո 'ի մխիթարել
զիս. ըստ բանի քում, զծառայս քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ և կե-
ցից. զի օրէնք քո խօսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք 'ի
տարապարտուց անիրաւեցան յիս.
այլ ես հոգացայ 'ի պատուիրանս քո։
Դարձեսցեն զիս երկիւղածք քո,
և որք ճանաչեն զվկայութի̃ս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարու-
թեան քում. զի մի՛ ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութի̃ս
քո. զի ես 'ի բանս քո յուսացայ։
Ապաստեցին աչք իմ բանի քում. ա-
սացի երբ մխիթարեսցես զիս։
Եղէ ես ոպ̃ տիկ 'ի պարզի. զի զար-
դարութի̃ս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո.
երբ

երբ առասցես ինձ իրաւունս ՚ի հա-
լածչաց իմոց։ Պատմեցին ինձ անօ-
րէնք զխորհուրդս· այլ ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ
են· ՚ի նանիր հալածեցին զիս, օգ-
նեա ինձ։ Փոքր մի եւս՝ եւ կորուսա-
նէին զիս յերկրի · այլ ես ոչ թողի
զպատուիրանս քո։ Ըստ ողորմութեան
քում կեցո զիս · եւ պահեցից զվկայ-
ութիւնս բերանոյ քո։
Յաւիտեան տէր՝ բան քո կայ յեր-
կինս · ազգէ մինչեւ յազգէ ճշմար-
տութիւն քո։ Հաստատեցեր զերկիր՝
եւ կայ։ Հրամանի քում մնայ տիւ ·
զի ամենայն ծառայք քո են։
Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին,
կանխաւ եւս արդեօք կորուսեալ էի
՚ի խոնարհութեան իմում։
Յաւիտեան ոչ մոռացայց զարդա-
րութիւն քո · զի նոքօք կեցուցեր զիս։
Քո եմ ես, եւ կեցո զիս · զի զարդա-
րութիւնս քո խնդրեցի։ Ինձ սպա-
սեցին մեղաւորք ՚ի կորուսանել · զի
զվկայութիւնս քո ես · ՚ի միտ առի։

Ամ կատարածի տեսի զվախճան․
յոյժ անդորր են ինձ պատուիրանք
քո։ Որպ սիրեցի զօրէնս քո․ զօրհա
նապազ խօսք իմ էին։ Քան զթշ
նամիս իմ իմաստուն արարեր զիս
՚ի պատուիրանս քո․ զի յաւիտեան
իմ էին։ Քան զամ ուսուցիչս իմ
իմաստուն եղէ․ զի վկայութիւնք քո
խօսք իմ էին։ Քան զծերս իմաս
տուն եղէ․ զի զպատուիրանս քո քըն
նեցի։ Յամ ճպրհց չարաց արգելի
զոտս իմ․ որպ զի պահեցից զբանս քո։
Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ․
զի դու օրէնսդէտ արարեր զիս։
Որպ զի քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո
քան զմեղր՝ բերանոյ իմոյ։
Ի պատուիրանաց քոց իմացայ՝ ա
տեցի զամ ճանապարհս չարաց․ զի
դու օրէնսդէտ արարեր զիս։
Ճրագ են բանք քո ոտից իմոց, և
լոյս շաւղաց իմոց։ Երդուայ և
հաստատեցի․ զի պահեցից զամենայն
իրաւունս արդարութեան քո։
Խոնարհ եղէ մինչև յոյժ․ Տր՝ կեցո
զիս

զիս ըստ բանի քում։ Ընդ կամս բե-
րանոյ իմոյ հաճեսցին տր· և զիրաւ-
ունս քո ուսո՛ ինձ։ Անձն իմ ՚ի
ձեռս քո է յամ ժամ· և զօրէնս քո
ես ո՛չ մոռացայ։ Եդին ինձ մեղա-
ւորք զորոգայթ· ՚ի պատուիրանաց
քոց ես ո՛չ մոլորեցայ։ Ժառանգե-
ցի զվկայութիւնս քո յաւիտեան·
զի ցնծութիւն է սրտի իմոյ։ Խոնար-
հեցուցի զսիրտ իմ, առնել զարդա-
րութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման։
Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո
սիրեցի։ Օգնական և փրկիչ իմ ես
դու· և ես ՚ի բանս քո յուսացայ։
՚Ի բաց եղերուք յինէն չարք· և քըն-
նեցից զպատուիրանս այ իմոյ։
Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կե-
ցո՛ զիս· և մի՛ յամօթ առներ զիս ՚ի
յուսոյ իմմէ։ Օգնեա՛ ինձ, և ապ-
րեցո՛ զիս· և խորհեցայց յիրաւունս
քո յամ ժամ։ Անարգեցեր զամենե-
սեան՝ որք ապստամբք եղեն յարդա-
րութեց քոց· զի անիրաւութիւնք էին
խորհուրդք նոցա։ Յանցաւորս հա-

համարեցայ զամն մեղաւորս երկրի. վն այնորիկ սիրեցի զպատուիրանս քո: Բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի ՚ի դատաստանաց քոց երկեայ յոյժ:

Արարի իրաւունս և արդարութի. մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց: Ընկալ զծառայս քո ՚ի բարի. զի մի՛ ամբարտաւանք զրկեսցեն զիս: Պակասեցին աչք իմ փրկութե քում տր. և բանից արդարութե քո: Արա՛ ընդ ծառայի քում տր ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո՛ ինձ: Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո: Ժամ է պաշտել զտր. խափանեցին զօրէնս քո: Վն այնորիկ սիրեցի զպատուիրանս քո քան զոսկի և զտպազիոն: Վն պատուիրանք քո յաջողեցան ինձ. զի ատեցի ես զճանապարհս չարաց: Սքանչելի են վկայութիւնք քո, վն այնորիկ սիրեաց զնս անձն իմ.

Յաւիտենութիւն բանից քոց լուսա-
ւորէ, և իմաստուն առնէ զտղայս։
Զբերան իմ բացի, և առի շունչ. ՚ի
պատուիրանս քո փափագեցի անձն իմ
Նայեաց առ իս և ողորմեա ինձ, ըստ
իրաւանց սիրողաց անուան քո։
Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ
ըստ բանի քում. և մի՛ տիրեսցէ ինձ
ամենայն մեղք։ Փրկեա զիս ՚ի զր-
պարտութենէ մարդկան. և պահեցից
զպատուիրանս քո։ Երեւեցո զե-
րեսս քո ՚ի ծառայս քո, և ուսո ինձ
զարդարութիւնս քո։ Ակունք ջուրց
իջին յաչաց իմոց. զի ոչ պահեցին զօ-
րէնս քո։ Արդար ես դու Տէր, և
ուղիղ են դատաստանք քո։
Պատուիրեցեր զարդարութիւն վկայու-
թեանց քոց. և ճշմարիտ են յոյժ։
Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռա-
ցան զբանս քո թշնամիք իմ։
Նորոգեալ է բան քո յոյժ, և ծառայ
քո սիրեաց զնա։ Մանուկ եմ ես և
արհամարհեալ. և զարդարութիւնս քո
ես ոչ մոռացայ։ Արդարութիւն քո

 ար

արդարութ՟ի յաւիտենից. և օրէնք
քո ճշմարիտ են: Նեղութիւնք և
վիշտք գտին զիս. և պատուիրանք քո
խօսք իմ էին: Արդարութեամբ են
վկայութ՟իք քո յաւիտեան. իմաստուն
արա և կեցո՛ զիս: Կարդացի առ քեզ
բոլորով սրտիւ իմով. լո՛ւր ինձ տ՟ր,
զի զարդարութ՟իս քո խնդրեցի:
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա՛ զիս.
և պահեցից զվկայութ՟իս քո:
Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի.
և ես ՚ի բանս քո յուսացայ:
Կանխեցին աչք իմ առաւօտու, ՚ի
խօսիլ ինձ զբանս քո: Ձայնի իմում
լո՛ւր տ՟ր՝ ըստ ողորմութեան քում.
և յիրաւունս քո կեցո՛ զիս:
Մերձեցուցին յիս հալածիչք իմ
զանօրէնութ՟ի. զի յօրինաց քոց հե-
ռի եղեն: Մերձ ես դու տ՟ր. և ա՟մ
պատուիրանք քո ճշմարիտ են:
՚Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութ՟եց
քոց. զի յաւիտ՟ն հաստատեցեր զն՟ա:
Տե՛ս զխոնարհութիւն իմ, և փրկեա՛
զիս. զի զօրէնս քո ես ո՛չ մոռացայ:
Դա

Դատեա՛ զդատաստանս իմ, եւ փրկեա՛
զիս. եւ ըստ բանի քում կեցո՛ զիս։
Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն,
զի զիրաւունս քո ո՛չ պահեցին։
Գթութիւնք քո բազում են տէր.
ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս։
Բազում են, որք հալածեն եւ նեղեն
զիս. ՚ի վկայութեանց քոց ես ո՛չ խոտո-
րեցայ։ Հայէի յանագորոյնս՝ եւ մա-
շէի, զի զպատուիրանս քո ո՛չ պահեցին։
Տե՛ս՝ զի զպատուիրանս քո սիրեցի.
տէր՝ ողորմութեամբ քով կեցո՛ զիս։
Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է.
յաւիտեան են ամենայն իրաւունք ար-
դարութեան քո։ Իշխանք հալածե-
ցին զիս ՚ի նանիր. եւ ՚ի բանից քոց
երկեաւ սիրտ իմ։ Ցնծացայ ես ՚ի
բանս քո, որպէս այն՝ որ գտանէ աւար
բազում։ Զմեղս ատեցի եւ անար-
գեցի, եւ զօրէնս քո սիրեցի։
Եօթն անգամ յաւուր օրհնեցից ըզ-
քեզ. վասն իրաւանց եւ արդարութեան քո։
Խաղաղութիւն բազում է այնոցիկ՝
որք սիրեն զօրէնս քո. եւ ո՛չ գոյ ՚ի
նա

նց գայթագղութիւն: Սպասեցի փր
կութեն քում տր, և զպատուիրանս
քո սիրեցի: Պահեաց անձն իմ ըզ
վկայութիւնս քո, և սիրեաց զնս յոյժ:
Պահեցից զպատուիրանս՝ և զվկայու
թիւնս քո. զի ամ ճանապարհք իմ
առաջի քո են: Մերձեսցին խնդր
ուածք իմ առաջի քո տր. ըստ բանի
քում իմաստո՛ւն արա զիս: Մտցեն
աղօթք իմ առաջի քո տր. և բանիւ
քով փրկեա՛ զիս: Բղխեսցեն շըր
թունք իմ զօրհնութիւս քո, յորժամ
ուսուսցես ինձ զարդարութիւս քո:
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի
ամ պատուիրանք քո արդարութի են:
Եղիցի ձեռն քո՛ի կեցուցանել զիս.
զի զպատուիրանս քո ընտրեցի: Յանկա
ցայ փրկութե քում տր. և օրէնք քո
խօսք իմ էին: Կեցցէ անձն իմ, օրհ
նեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնես
ցեն ինձ: Մոլորեցայ ես որպ զոչխար
կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո,
զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Փառք հօր և որդւոյ և՛:

 Ե~

Նու չինի առ շուրջանն։

Ի՛ քէն հայցեմք հայր գըթութեց և ա՛ծ մըխիթարութեանց՝ · ՚ի տըխրալի՛ն գիշերոյի՛ն մե՛ր_ ձեռն ժամուս՝ · մխիթարեա՛ ըզ մեզ ՚ի տըրտմութեց մեղաց՝ · և շնոր հեա՛ զուրախութի՛ն գործովք որ գարութե՛ · աղաչա՛նօ մմմ՛ք սբ ա՛ծածնի՛ն և առենա՛յն սրբո՛ց։ Ը՛ստ քաղցրագո՛յն ա՛ծայի՛ն քո՛յ հրամանի կո՛չման որդի աստուածոյ՝ · եկեա՛լ եմք առաջի՛ քո յե՛րեկոյի՛ս աշխատեա՛լք և ծա՛նրաբեռնեալք՝ · թեթևացո ՚ի՛ ծա՛նրութեց մեղաց զա՛ն ձի՛նս · և զօրացո՛ բառնալ կամաւ ըզ քա՛ղցր լուծ քոց պատուիրանաց՝ · աղաչեմ։ Պաղատի՛մք առ քեզ հո_ գւով ՚ի՛ հանգըստեա՛ն հասեա՛լ ժա_ մուս մարդասէր հո՛գի աստուածոյ՝ · յո՛րժամ նորոգես զերե՛ս երկրի և

վերըստին ըստա՛նա՛ս զո՛րդի՛ս մարդ-
կան՝ ․ նորափետուր զարդարեա՛լ ը՛դ
ննջեցեալսն մեր ը՛դ ծնեա՜լսն՝ ՚ի քէն
որք աւազանաւն՝ ․ աղա՛ւ։ Ո կենդա-
նա՛գի՛ր անարատ ծնողի՛ քո արկա-
նե՛մք առաջի՛ անոխակալ տրու-թե
ըդ քո՝ ․ յորժամ գաս փառօք հօր
դատել ը՛դ թշնամին խաչի՛ քոյ՝ ․
ներեա՛ յանցանաց մերոց բարեխօ-
սութբ մօ՛ր քո՛յ և կուսի՝ ․ ա՛ղաչեմք
ը՛դ քե՛զ տէ՛ր պահպանեա՛ ը՛դ մեզ
ընդ հովանեաւ խաչի՛ քո սո՛ւրբ։
Հաղորդս արա՛ և զմե՛զ տէր՝ ընդ
սրբոց քոց առաքելո՛ցն ․ որք արժա-
նի եղեն տեսանե՛լ ը՛դ քեզ ՚ի յարու-
թեա՛ն քո՝ ․ արժա՛նաւորեա՛ տէ՛ր
մ՛ր տեսանել ըղքեզ ՚ի միւսանգամ
քո գալըստեանն՝ ․ օրհնութի առա՛
քողի՛ն ՚ի բարձրունս։ Ի նրատիլ
քո յատենի՛ դատաւորք ա՛հեղ ․ ա՛ղա-

ձայնիւք սբ Աստուածածնին՝ յիշեալ ընդ նն
ջեցելոցն մեր · յորժամ գայցես
մեծաւ փառօք · քանզի քո են փառ
ք յաւիտեանս յաւիտենից ամէն :

Դշ Սրբուհի Մարիամ · սափոր
ոսկի՝ և տապանակ կտակարանաց ·
որ զերկնաւորն ի վերուստ էջ հացըն կե
նաց պարգևեցեր քաղցեալ բնութեանս ·
առ նա միշտ բարեխօսեա վասն
քաւութեան մեղաց անձանց մերոց ·
Դուռն անմարմնոց հրեշտակաց ·
քեզ երանեն ամենօրհնեալ կոյս մա
րիամ · որ զ[?] թանձն որ
ընդ հօր կրեցեր ի քեզ անմարմնա
պէս · առ նա միշտ բարեխօսեա վասն
քաւու : Այն որոյ և մեք հաւա
տացեալ քեզ երկրպագեմք քո
և պատուեմք · հայցեմք ի քէն · բա
րեխօսութեամբ Աստուածածնի՝ զամենայն
[?] ծնգեալ յանձինս մեր՝ ·

օրհնեմք ընդ քեզ ՚ի յարութեան երե
կոյիս անճառ թագաւոր։

Առաքեալք Աստուծոյ՝ ընտ Եջ
րեալք ՚ի սկզբանէ նախքան զաշ
խարհս՝ · որք արժանի եղէք
տեսանել զանտեսն հրեղինաց՝ ·
բարեխօսեցէք առ Տէր՝ վասն ման
կանց եկեղեցւոյս։ Առաքելականք
քրիստոսի՝ · համբարձեալք աստուա
ծայինն խորհրդոցն՝ · որք
՚ի հոսանուտ մեղաց ծովէն՝ վերա
ծելք զմարդիկ ՚ի կեանս անմահս՝ ·
բարեխօսեցէք։ Գերագոյնք քան
ըզ բնաւս՝ · անճառելոյն հասիք
երանութեան՝ · որք ՚ի գալստեան
տեառն նստջիք յերկոտասան ա
թոռսն քրիստոսի · բարե։

Վարունակեալ պահեցին յանեղ ու
զէն դրախտին ընդ ձանձրացաւ
ծառոյն կենաց՝ · քրօբէական



հոլ

Հոյլքըն բոցեղէն սրօբէիւք․ այսօր
արտափայլեալ ցուցար յերկրի ած-
աղանդ փայտ կենաց և փրկութեան ․
զքեզ օրհնեմք մանկունք
սուրբ եկեղեցւոյ։

Անբեկոյն ծանուցն վերաբերեալ
խոյ յորջանկէն փոխանակ ի սա-
հակոյ ․ այլ ի վերայ քո զե-
նուն զառն անարատ ․ ի հաղթու-
թեան հօր և ի բառնալ ըզ մեղս
մեր ․ զքեզ օրհնեմք միշտ։

Պարծանք պօղոսեան գաւառնեալ
ըզ քեզ ածային բանին ․ տեղի և
զենարան ․ քանզի քեւ ասպրե
ցայք ի խածանօղ և յանմահութիւն գա-
ղանէն ․ և ի վեր քոյ հեղեալ շիթք
անապական արեանն ըզ կողածնին
Ճենջեան ըզ մեղս ․ զքեզ օրհն։

Երկնաւոր հօտ ընտրեալ ․ զոր
հալիւրն քաջ՝ թողեալ յերկինս ․



և

և եկեալ 'ի խնդիր մեզ մոլորե-
լոցս • որով լցեալ զթիւ հարիւ-
րոցդ • որոյ ուրախութիւն 'ի յերկինս
է երկնաւորացդ • աղաչեմք ըզ ձեզ
բարեխօս լերուք առ տէր • վասն
քաւութեան մեղաց մերոց ։
Տեսանողք աննտեսին • խորհր-
դածուք խորոցն աստուծոյ • որք
իջեալք ընդ միածնին սպասաւորել
տնօրէնութեանն 'ի ծննդեանն
աւետաւորք հովուացն • և կանանցն
իւղաբերից • կենաց քարոզք ըզ
կենդանւոյն • աղաչեմք ։
Պահապանք աշխարհի • բանա-
կք տն շուրջ զերկիւղածովք • բա-
րեկամք ազգի մարդկան • միջնորդք
մահու և յարութեան • Միքայէլ և
գաբրիէլ մեծք • որ կայք միշտ
առաջի ամենասուրբ Երրորդու-
թեանն • աղաչեմք ըզ ։

Երկնաւո՜ր փեսայ · անստուե՜ր լոյս իմանալի՝ · որ 'ի յերկնից ի ջեր · 'ի սէր հարսին քո եկեղեցւոյ · զոր խոստացաւ քեզ բարեկամն և փեսաւէրն քո յովհաննէս · սրբին մաղթանօք ողորմեա։

Քաւակերպակիցն անհաս և անտես 'ի սերովբէից · սրբութեանց տէր և տէր բոլորից · խոնարհեցար 'ի յորդանան · հայցելով 'ի ծառայէն · մկրտութիւն ջրոյ 'ի լուանալ ըզ մեղս ադամայ · սրբին մաղ։

Որ յամլորդւոյն վըկայեցար գառն աստուածոյ բարձող մեղաց՝ · զոր գերագոյն արդարոց · ծանուցեր մեծ 'ի ծնընդս կանանց · և ճրագ օրինաց · որ և 'ի դըժոխս ըզ փրկական գալուստըն քո քարոզեաց · սրբին մաղ։

## Մաղթանք։

Հոգւոյն հանգուցելոյ քո Աստուած՝ տուր հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց։

## Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղ"։

Սրբոյ հանգուցելոյ հոգւոյն աղաչեսցուք զերկնաւոր Տէրն մեր Քրիստոս՝ զի զնա ընդ արդարս դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ"։

## Աղօթք։

Քրիստոս որդի Աստուծոյ՝ անոխակալ և բարեգութ. գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցելոյ ծառայից քոց։ Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո։ Արա արժանի ողորմութեան. քաւութեան և թողութեան մեղաց։ Պայծառացո ընդ սուրբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես Տէր և Արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայել է փառք՝ իշխանութիւն և պատիւ։ Այժմ և միշտ և յաւ"։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես"։



Ի Թափօր երիւք՝ ել տէր մարմնա ցեալ.
յաղօթելն եղե՝ այլակերպե ցեալ.
պե տրոս մինչ խօսէր՝ ամպ հովանա ցեալ.
Ձայն անտի ձայն հօր՝ Որդի սիրե ցեալ.

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից հանգըստեան ժամուն։ Որ կատարի 'ի դէմս Հօր այ. Օ՛ն պահպանողական աջով միածնին պահես-ցէ զմեզ 'ի խաւարային գիշերի.

# ԱՌԱՔԵԱ՛ ՏԷՐ ԶԼՈՅՍ

քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանիցեն զիս 'ի լեառն սբ և 'ի յարկս քո.

Մտից առ աջի սեղանոյ այ առ ած. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ.

Խոստովան եղէց քեզ օրհնութբ ած ած իմ.

Ընդէ՞ր տրտմեալ ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ ած. խոստովանեալ նմա. փրկիչ երեսաց իմոց ած է.

Փառք Հօր և որդւոյ և. այժմ և".

Լու ես խաղաղութեն զօր աղա".

Օրհնութի և փառք Հօր և որ".



Սաղ

Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր. և փրկութիւն քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի այնոցիկ որ նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ։

Մի՛ ՚ի բացեայ առնուր ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամ ժամ, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու. զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ՚ի պատուիրանս քո, զոր սիրեցի։ Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում։

Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։

Այս մխիթարեաց զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցին յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից
տէր, և մխիթարեցայ։
Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւո-
րաց, և որք թողին զօրէնս քո։
Գովելի են ինձ իրաւունք քո, ՚ի
տեղւոջ պանդխտութեան իմոյ։
Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տէր.
և պահեցի զօրէնս քոյ։
Այս եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս.
զի զարդարութիւնս քո խնդրեցի։
Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո
սիրեցի։
Օգնական և փրկիչ իմ ես դու.
և ես ՚ի բանս քո յուսացայ։
՚Ի բաց եղերուք յինէն չարք. և քըն-
նեցից զպատուիրանս այ իմոյ։
Օգնեա ինձ ըստ բանի քում, և կե-
ցո զիս. և մի՛ յամօթ առներ զիս ՚ի
յուսոյ իմմէ։
Օգնեա ինձ, և ապրեցո զիս. և խոր-
հեցայց զիրաւունս քո յամ ժամ։
Անարգեցեր զամենեսեան՝ որք ապըս-
տամբք եղեն յարդարութեանց քոց. զի
անիրաւութիւն էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. եւ բանիւ քով փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնս քո։ Խօսեսցի լեզու իմ ըզբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութիւն են։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում Տէր. եւ օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայ քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամ-
բարտաւանից. և ձեռք մեղաւորաց
մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ամ՟քեան՝ որք գործեն
զանօրէնութի՟. մերժեսցին և ոչ մի՛
կարասցեն հաստատիլ:

Նա 'ի տէր յուսացայ. ցնծացայց և
ուրախ եղէց յա՟ծ փրկիչ իմ:

Տ՟ր տ՟ր ես ինձ զօրութի՟, և կացոյց
զոտս իմ 'ի հաստատութե՟. 'ի վ՟ր պա-
րանոցի թշնամւոյն կացոյց զիս, և
հանգոյց զիս երագ երագ:

Որ բնակեալն է յօգնութի՟ բարձրելոյն,
ը՟ հովանեաւ ա՟յ յերկնից հանգիցէ:

Ասասցէ տ՟ն՝ ընդունօղ իմ ես. ապա-
ւէն իմ ա՟ծ, և ես յուսամ 'ի նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսո-
ղին, և 'ի բանիցն 'ի խռովութէ:

'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ.
'ի հովանի թևոց ն՟ր յուսասցիս:

Ո՟ս զէն շուրջ եղիցի զքեւ՝ ճշմար-
տութիւն նորա:

Ո՛չ երկիցես դու՝ յերկիւղէ գիշե-
րի, և ո՛չ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուն-

Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթակ
ղութենէ դիւին 'ի հասարակ աւուր։
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք,
և բիւրք ընդ աջմէ քումմէ . և առ
քեզ ինչ ո՛չ մերձեսցին։
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու, և զհատուցումն մեղաւորաց
տեսցես . զի դու Տէր յոյս իմ ես.
Զբարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն, զի ո՛չ հասցեն առ քեզ չարք . և
տանջանք մի մերձեսցին 'ի յարկս քո։
Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո,
'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։
'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ,
զի մի երբէք հարցես զքարի զոտն քո
'Ի վերայ իժից և քարբից գնասցես դու .
և առ ոտն կոխեսցես զառիւծն և ըզ
վիշապն։ Քանզի յիս յուսացաւ, և
փրկեցից զնա . հովանի եղէց նմա,
զի ծանեաւ զանուն իմ։
Աղաղակեսցէ առ իս՝ և ես լուայց նմա .
և առ նմա եղէց 'ի նեղութեան։
Փրկեցից և փառաւոր արարից զնա .
երկայն աւուրբք լցուցից, և ցուցից
նմա զփրկութիւն իմ։

Առ քեզ տ՟ր համբարձի զաչս իմ. որ
բնակեալդ ես յերկինս։
Որպէս աչք ծառայի ի ձեռն տ՟ն
իւրոյ, եւ որպէս աչք աղախնոյ ի
ձեռն տիկնոջ իւրոյ։
Այնպէս են աչք մեր առ քեզ տ՟ր
ա՟ծ մեր, մինչեւ ողորմեսցիս ի վ՟ր մեր։
Ողորմեա մեզ տ՟ր՝ ողորմեա մեզ. զի
բազում լցաք արհամարհանօք։
Առաւել լցան անձինք մեր նա
խատանօք, որք նախատէին զմեզ. եւ
արհամարհանօք ամբարտաւանից։
Ա՟ծ յանուն քում կեցո զիս, եւ ի
զօրութ՟ն քում իրաւ արա ինձ։
Ա՟ծ լուր աղօթից իմոց. ունկնդիր լեր
բանից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան ի վ՟ր իմ. եւ հզօրք
խնդրեցին զանձն իմ. եւ ոչ համարե
ցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց։
Ահա ա՟ծ օգնական իմ. եւ տ՟ր ընդու
նող հոգւոյ իմոյ։
Դարձուսցանէ զչարն ի թշնամիս
իմ, ճշմարտութ՟ն քով սատակեա զնոսա։
Կամօք իմովք պատարագս մա


տու

տուեյց քեզ · և խոստովան եղէց ան֊
ուան քում Տէր, զի բարի է։
Յամենեղունէ իմմէ փրկեցեր զիս ·
և ՚ի թշնամիս իմ ետես աչն իմ։
Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մե֊
րոց · գովեալ՝ և առաւել բարձրացեալ
անուն քո յաւիտեան։ Եւ օրհնեալ է
անուն սուրբ փառաց քոց · գովեալ և՛։
Օրհնեալ ես՛ ՚ի տաճարի փառաց սրբ֊
ութեան քո · գովեալ և՛։
Օրհ՛ ՚ի վերայ աթոռոյ արքայութեան քո · գ՛
Օրհնեալ ես որ նստիս ՚ի քերոբէս՝ և
հայիս յանդունդս · գո՛։
Օրհ՛ ՚ի վերայ հաստատութեան երկնից · գ՛
Օրհնեցէք զԱստուած ՚ի սրբութեան նորա ·
օրհնեցէք զնա ՚ի հաստատութեան
՚ի զօրութեան նորա։
Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան նորա · օրհ֊
նեցէք զնա ՚ի բազում մեծութեան նորա։
Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութեան · օրհ֊
նեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ։
Օրհնեցէք զնա ցնծութեամբ · գովեցէք
զնա ուրախութեամբ։
Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղցր · գո֊

ձեցէք զնա ի բարբառ լսելի։
Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան․
ամ հոգիք օրհնեցէք զտր։
Արդ՝ արձակես զծառայս քո տր՝
ըստ բանի քում ի խաղաղութիւն․ զի
տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատ
րաստեցեր առաջի ամ ժողովրդոց։
Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց․ և
փառք ժողովրդեան քում իսրայէլի։
Զգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս
աջ քո․ և տր հատուսցէ ընդ իմ։
Տր ողորմութիւն քո յաւիտեան զգործս
ձեռաց քոց մի՛ անտես առներ։
Տր՝ հան ի բանտէ զանձն իմ․ գոհա
նամ զանուանէ քումմէ։
Առ քեզ սպասեն արդարքն մինչև
հատուսցես։
Մեծացուսցէ անձն իմ զտր․ և ցըն
ծասցէ հոգի իմ ած փրկչաւ իմով։
Այց արար ի վերայ խոնարհութեն
աղախնոյ իւրոյ․ այսուհետև երա-
նիցեն ինձ ամ ազգք։
Արար ընդ իս մեծամեծս հզօրն․ և
սբ է անուն նորա։

Ողորմութիւն արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զօրութիւն բազկաւ իւրով:
Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց:
Զխոնարհս բարձրացոյց, զքաղցեալս լցոյց բարութեամբ. և զմեծատունս արձակեաց ունայնս:
Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ, յիշել զողորմութիւն իւր:
Որպէս խօսեցաւ առ հարսն մեր, ընդ Աբրահամու, և զաւակի նորա յաւիտեան:
Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո զորդի աղախնոյ քոյ. և արա առ իս նշան բարութեան:
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու Տէր օգներ ինձ, և մխիթարեցեր զիս: Փառք Հօր և.

Սաղմոս:

Անձն իմ 'ի ձեռս քո է յամենայն ժամ. և 'ի Տէր խաղաղ քո յուսացեալ եմ
Թագաւոր երկնաւոր. զողորմութիւն քո բարեխօս ունիմ առ քեզ:
Որ երկոտասանմբոք եւ առ առաքեալսն

մի՛ անտես առներ զապաւինեալս 'ի
քեզ. այլ պահեա պատուական և սուրբ
խաչիւ քով 'ի խաղաղութեան։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն Աստուած. և
խնդրեսցուք 'ի նմանէ զի առաքեսցէ
զհրեշտակ խաղաղութեան որ եկեալ պա
հեսցէ զմեզ յերկիւղալին գիշերիս.
'ի դիւական խռովութենէ ամբողջ պահե
լով զհոգի և զմարմին մեր մինչև 'ի
կատարումն ժամանակի ամաց մերոց։ ամէն՛։
Զհանգիստ գիշերիս խաղաղութ՛՛։
Զհրեշտակ։ Զքաւութ։ Զմերյ։
Առ կեա մի։ Զանձինս։ Ողորմեա՛ց։

Աղօթք։

Տէր Աստուած մեր դու պահեա զմեզ խա
ղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և
յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ
քո բևեռեալ պահեա զմիտս և զխոր
հուրդս մեր։ Որպէս զի յամենայն ժամ
քս պահպանեալ լիցուք յորոգայթից
թշնամւոյն։ Առ քեզ հանձնցուք զօրհ
նութիւն և զփառս հօր և որդւոյ և՛.

Խաղաղութեան Ա՛ղնէցուն։

Որեղջամակի խաղաղութե յանձն արա զանձինս մեր տր զօրութեց։ Որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ՚ի տուէ և ՚ի գիշերի։ յարթնութե և ՚ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի։ Նու այժմ աղաչեմք զքեզ տր ած մեր՝ զհանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղութե ամ ցուցանել. և հասանել ՚ի պաշտօն առաւօտու յերկրպագութի և ՚ի փառաբանութի ամենասուրբ երրորդութեդ։ այժմ և"։

Սաղմոս, 4։

Ի յաղաղութե յայս և ՚ի նոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։ Ի կարդալ իմում լուաւ տր ինձ ած արդարութե. ՚ի նեղութե ինձ անդորր արարեր. ողորմեա՛ ինձ և լուր աղօթից իմոց։ Որդիք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութի, և խնդրէք ըզ ս տութի։ Ծանի՛րուք՝ զի սքանչելիս արար տր սբյ իւրում. և տր լուիցէ

ինձ

ինձ ՚ի կարդալ իմում առ նա։ Բարկա
նայք՝ եւ մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք
՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջա
ցարո՛ւք։ Մատուցէ՛ք պատարագս
արդարութեան. եւ յուսացարո՛ւք ՚ի Տէր։
Բազումք ասեն, թէ ո՛ ցուցցէ մեզ
զբարութիւն Տեառն. նշանակեցաւ առ մեզ լոյս
երեսաց քոց. եւ ետուր ուրախութիւն
սրտից մերոց։ ՚Ի պտղոյ ցորենոյ գի
նւոյ՝ եւ ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։
Խաղաղութեամբ յայս եւ ՚ի սոյն ննջեսցուք
եւ զարթիցուք. զի դու Տէր միայն առան
ձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Ալէլուիա Օրհնի՛։ Խաղաղութիւն
Ամենեցուն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիրպագութիւն լռէարուք։
Աւ. Սուրբ Յիսուսի Քրիստոսի ըստ Յովհաննու։
Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ՛
Ասէ Տէր Աստուած։ Տէրն Դը Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ
հատն ցորենոյ անկեալ յերկիր
մեռանիցի։ Ինքն միայն կայ. ապա
եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս
առ

առնէ. որ սիրէ զանձն իւր՝ արձակէ
զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխ͞ր
յայսմիկ՝ ՚ի կենսն յաւիտենականս պա
հեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ,
զհետ իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ
և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս
պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

Փոխ ձէղ ձէր ա͞ծ Դէր։

քրղ Ս͞բ խաչիւ աղաչեսցուք զտէր՝ զի
սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց. և
կեցուսցէ շնորհիւ ող"։

ծող Պահպանեա զմեզ ք͞ս ա͞ծ մեր ընդ
հովանեաւ ս͞բ և պատուական խաչի
քո ՚ի խաղաղութ. փրկեա յերևելի
և յաներևոյթ թշնամեաց։ Արժա
նաւորեա գոհութ փառաւորել զքեզ
ընդ հօր և ս͞բ հոգւոյդ. այժմ և"։
Օրհնեալ ա͞ծ մեր յ͞ս ք͞ս. ամէն։
Հայր մեր որ յերկինս"։

մող Անկանիմք առաջի քո ս͞բ ա͞ծածին
և աղաչեմք զանարատ զկոյսդ՝ բարե
խօսեա վ͞ս անձանց մերոց. և աղաչեա
զմիածին որդին՝ փրկել զմեզ ՚ի փոր
ձութենէ և յա͞մ վտանգից մերոց։

 Ու

Ո՛վ արձակիչդ ես կապելոց՝ պար-
գեւատու ամենայն. այսօր հայցմամբ
ծերունւոյն՝ արձակեա՛ և զիս զբազ-
մամեղս ՚ի կապանաց մահու ՚ի կեանս
յաւիտենից:

Մաղթանք [illegible] ընդդէմ [illegible] [illegible]
[illegible]: Ասացեալ Սրբոյն Գրիգորի
Նարեկացւոյն: ՂԲ

Ընկա՛լ քաղցրութեա՛մբ՝ տէ՛ր տէր հզօր,
զդաւանողացս զաղաչանս. մա-
տի՛ր գթութեամբ՝ առ պատ-
կառեալս դիմօք. փարատեա՛ մեծաս-
պարգեւ, զամօթալից տխրութիւս.
բարձ յինէն՝ ողորմած, զանբերելի
ծանրութիւս. անջրպետեա՛ հնարաւոր.
զմահացու կրթութիւնս. աւարտեա՛
մի՛շտ յաղթող, զխաբողին հաճութիւս.
բացատրեա՛ վերնային, զմոլելոյն մա-
ռախուղ. կնքեա՛ կեցուցիչ, զկործա-
նչին ընթացմունս. ցրուեա՛ ծածկա-
տես, զըմբռնողին չար գործունս.
խորտակեա՛ անքննելի, զմարտողին
դիմեցմունս: Տեառնագրեա՛ քո
անուամբդ՝ զլուսանցոյց երդ յար-
կիս.

կիս • պարփակեալ քո ձեռամբդ՝ զա_
ռաստաղ տաճարիս • գծագրեալ քո
արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս •
կերպացո զքո նշանդ՝ 'ի հետս ելից
մաղթողիս • ամրացո քո աջովդ՝ ըղ_
հանգստեանս խշտի • մաքրեսցես 'ի
հաղէից՝ զծածկարան անկողնոյս •
պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ
անձն հոգւոյս • անխարդախ արա_
ցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս •
կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ
երկնայնոյ • կարգեսցես 'ի դիմի՝ ընդ
դեմ դիւացն դասու: Տուր հան_
գիստ բերկրութե̃ մահահանգոյնս
նիրհման 'ի խորութեան գիշերիս ,
բարեխօսութբ̃ հոյցուածոց սրբոյ
ած̃ածնիդ՝ և ա̃մ ընտրելոց: Մփո_
փեալ պարուրեալ զպատուհան տե_
սութե̃ց՝ զգայարանացս իմաստից՝
անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփա
կան խռովութե̃ց , կենցաղական զբաղ
մանց , անրջական երազոց , խոլականաց
ցնորից , յիշատակաւ քո յուսոյդ՝
անմոռանալի պաշտպանել: Ու սթա_


փել

փեսայ վերստին 'ի հնչմանէ ծամրու-
թե՝ ամենազգաստ արթնութբ, հոգե
նորոգ զուարթութբ 'ի քեզ արձանացըլ,
զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ
հաստոց քեզ՝ ամենօրհնել թգւոր
փառաց անձառից, փրկանողաց երկ
նագումար խմբից երգակցեալ՝ յեր
կինս առաքել։ Ո՛վ դու փառաւո-
րեալ ես յամ արարածոց յաւիտենս
յաւիտենից. ամէն։

Նորին արեւոյն Գործորի Նոր · 41։

Որդի Այ կենդանւոյ օրհնեալ
յաւէտ, հօրդ ահաւորի անքննելին
ծնունդ. որ տկարանայ առ 'ի քէն
եւ ոչ ինչ։ Որ 'ի ծագել անստուեր նշու-
լից ողորմութե քո փութց, հալին մեղք.
հալածին դեւք. ջնջին յանցանք. խը
զին կապանք. խորտակին շղթայք.
կենդանանային մահացեալք. բժշկին
հարուածք. ողջանան վէրք. բառնին
ապականութիք. տեղի տան տխրութիք.
նահանջին հեծութիք. փախնու խա-
ւարն. մէկնի մէգն. մերժի մառա-
խուղն. փարատի մռայլն. սպառի ող-
ջա

Ջամուղջն · վերանոյ մութն · գնոյ գի-
շերին · տարագրի տագնապն · չքանան
չարիքն · հալածին յուսահատութիւնք ·
և թքուրէ ձեռն քո ամենակալ՝ քա-
ւիչդ ածիմ: Որ ոչ եկեր կորուսանել
զմարդկան հոգիս, այլ՝ կեցուցանել·
Թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում
ողորմութեդ · զի դու միայն ես յերկնի
անձառ, և յերկրի անզննին · ի տարր
գոյի՝ և յեզրս ծագաց [illegible] · սկիզբն
ամի՝ և յամի, ամ լրմամբ օրհնեալ
ի բարձունս: Եւ քեզ ընդ հօր և
հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ յաւի-
տեանս · ամէն:

Աղօթք խորանաշխարհորդ անջատից հաստա-
ցելոց ի Քրիստ · Որ արարեալ է տն
Ներսէսի Հայոց Կաթողիկոսի ·

Հաւատով խոստովանիմ՝ և եր-
կրպագանեմ քեզ, Հայր և
Որդի և սբ Հոգի · անեղ և
անմահ բնութիւն · արարիչ հրեշտակաց և
մարդկան և ամ եղելոց · և ողորմեա
քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

Հաստատով խոստովանիմ՝ և երկիրպա
գանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միա
նական սբ երրորդութի և մի ածութի,
արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի.
հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար
մեղաց՝ և անգիտութե. և լուսաւորեա՛
զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ՝ աղօ
թել քեզ ՚ի հաճոյս, և ընդունիլ ՚ի
քէն զխնդրուա՛ծս իմ. և ողոր"։

Հայր երկնաւոր ած ճշմարիտ, որ ա
ռաքեցեր զորդիդ քո սիրելի ՚ի խնդ
դիր մոլորեալ ոչխարին. մեղայ յեր
կինս և առաջի քո. ընկա՛լ զիս որպ զա
նառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմու
ճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. և"։

Որդի՛ այ ած ճշմարիտ, որ խոնարհե
ցար ՚ի հայրական ծոցոյ՝ և առեր մար
մին ՚ի սբյ կուսէն մարիամայ, վն մե
րոյ փրկութե. խաչեցար՝ թաղեցար և
յարեար ՚ի մեռելոց, և համբարձար
փառօք առ հայր. մեղայ յերկինս և
առաջի քո. յիշեա՛ զիս որպ զաւազակն
յորժամ գաս արքայութբ քով. և"։

Հոգի՛ այ ած ճշմարիտ, որ իջեր ՚ի



յոր

յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո, որպէս հրեղէն լեզուօք զսուրբ առաքեալսն. և ողորմեա։

Անքնին բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուան քում սրբոյ. և ողորմեա։

Տեսօղ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա։

Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս. զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի աստուածութեան քո զգայարանօք իմովք, և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա։

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայիլ յարատս. և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ

իմոյ ոչ խօսիլ զստութ. և սրտի իմոյ՝
ոչ խորհիլ զչարութ. և ձեռաց իմոց՝
ոչ գործել զանիրաւութ. և ոտից իմոց
ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութե.
այլ ուղղեա զշարժումն սոցա լինիլ
միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և":

Հուր կենդանի քս, ըզհուր սիրոյ
քո զոր սփռեր յերկիր, բորբոքեա
յանձն իմ. զի այրեսցէ զախտս հո
գւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց
իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ ի
մոյ, և վառեսցէ զլոյս գիտութե. քո
'ի սրտի իմում. և ողոր":

Իմաստութ հօր յս, տուր ինձ իմաս
տութի զբարիս խորհիլ՝ և խօսիլ՝ և
գործել առաջի քո յամ ժամ. 'ի չար
խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց
փրկեա զիս. և":

Կամեցօղ բարեաց տր կամարար, մի՛
թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գը
նալ. այլ առաջնորդեա ինձ լինիլ
միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և":

Արքայ երկնաւոր, տուր ինձ զար
քայութի քո, զոր խոստացար սիրե

լեաց քոց. եւ զօրացո՛ զախորժ իմ ատել
զմեղս, եւ սիրել զքեզ միայն, եւ առ-
նել զկամս քո. եւ ողոր՛՛։

Խնամօղ արարածոց, պահեա՛ նշանա-
խաչի քո՝ զհոգի եւ զմարմին իմ ՚ի
պատրանաց մեղաց՝ ՚ի փորձութեանց դի-
ւաց, եւ ՚ի մարդկանց անիրաւաց, եւ յամենայն
վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. ե՛՛։

Պահապան ամենի Քրիստոս, աջ քո հովանի՛
լիցի ՚ի վերայ իմ ՚ի տուէ եւ ՚ի գիշերի.
՚ի նստիլ ՚ի տան, ՚ի գնալ ՚ի ճանապա-
րհ, ՚ի ննջել եւ ՚ի յառնել, զի մի եր-
բէք սասանեցայց. ե՛՛։

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, եւ լնուս
զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ
յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա
եւ պատրաստեա՛ զպէտս հոգւոյ եւ մարմ-
նոյ իմոյ՝ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. ե՛՛։

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս
՚ի չար սովորութեանց իմոց ՚ի բարի սովո-
րութիւն. եւ բեւեռեա՛ ՚ի հոգւոջ իմ զահա-
լի օր մահուն, եւ զերկիւղ գեհենին,
եւ զսէր արքայութեան. զի զղջացայց ՚ի
մեղաց՝ եւ գործեցից զարդարութիւն. ե՛՛։

Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին. զի լուացից ըզմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և՛՛։

Պարգևեա՛ ողորմութիւն, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով. և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և՛՛։

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝ որք են ի ներքոյ երկնից. և՛՛։

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա ըզհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթևանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո. և՛՛։

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ



զե

զերամեանեալ կոչումն արդարոց՝ յերկ
նից արքայութենդ. և ողոր՟":
Ամենողորմ տր՟, ողորմեա՛ ամ՟ հաւա
տացելոց՝ ի քեզ, իմոց և օտարաց՝ ծա
նօթից և անծանօթից՝ կենդանեաց
և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց
իմոց և ատելեաց զթողութի՛ւն որ ա
ռնեն յանցանաց. և դարձո՛ զնս՟ ի չա
րեացն, զոր ունին ընդ իմ. զի ողորմու
թեանդ քում արժանի եղիցին. և":
Փառաւորեա՛լ տր՟, ընկա՛լ զաղաչանս
ծռ՟յիս քո, և կտ՟րեա՛ ի բարի զխնդր
ուածս իմ. բարեխօսութբ՟ սրբուհւոյ
Ածածնին, և Յովհաննու Մկրտչին,
և սրբյն՟ Ստեփաննոսի Նախավկային,
և սրբյն՟ Գրիգորի մերոյ Լուսաւորչին:
Եւ սրբց՟ առաքելոց՝ մրգրէից՝ վար
դապետաց՝ մարտիրոսաց՝ հայրա
պետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց՝
միանձանց՝ և ամ՟ սրբց՟ քոց, երկնա
ւորաց և երկրաւորաց: Եւ քեզ
փառք և երկրպագութի՛ւն անբաժա
նելի սրբ՟ Երրորդութեանդ՝ յաւիտեանս
յաւիտենից. Ամէն:

րոց և՚ի բնակութէս մերմէ։ Փրկեա՛
զմեզ ՚ի հրոյն յաւիտենից։ Առ քեզ
փառք յաւիտենանս ամէն։

Օրհնեա՛լ եղերուք ՚ի շնորհաց տր
Հոգւոյն. համբերո՛ւք խաղաղութբ.
և Տր եղիցի ըդ ամենեսեանդ. ամէն։

---

Խորան․ սարկաւագութէն և դպրութէ՝ շարարողութէ
պտղէկէն. Ահանու քահանայն ընթերցս սարկաւա
գութն և մփանէ ՚ի սրբութիւնն և առէն աղօթս։

•Քահանայք քո զգեցցին զարդա՛"։
Յիշեա՛ տր զդա՛ և այլն ՚ի Թի՛ւն 384
Խնդրեսցուք հաւատով միաբանութբ
՚ի տնէ՝ զի զողորմութե զշնորհսն իւր
արասցէ ՚ի վր մեր. տրն ամենա՛"։
Ողորմեա՛ց մեզ տր ած մեր՝ ըստ մե
ծի ողորմութե քում. ասասցուք ա՛"։

Ապա առէ քահանայն երկրպագութն տրողորմեա.
և ապա աղօթս։ Ապա սարկաւագն ասէ
շարաղատարան և առէ.

Առ և ս խաղաղու"։

Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հ՛"
Սոյնպս և շապկին ասէ և ուրարին
և գօտոյն և բազպանին և շուրջառին։



Ը



Խաչ ՚ի Գողգոթայ՝ և ՚ի Ս եղնա · տուն։
Որ պատարագի՝ Համբերձ կենաց · տունն։

Ճ[illegible] հանդերձէն՝ յորժամ զգենու։

ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ
անհաս անսկիզբն՝ · որ զար
դարեցեր զվերին պետութի՛ւնդ՝ ·
ի յառագաստ անմատոյց լուսո՛
յն՝ · գերապայծառ փառօք զդասս
հրեղինաց։ Անճառ ահաւոր զօրութեամբ
ստեղծեր զադամ պատկեր տիրակա
նն՝ · և նազելի փառօք զգեստաւո
րեցեր՝ · ի դրախտին եդենի տե
ղի բերկրանաց։ Չարչարանօք քո
[illegible] միածնիդ՝ նորոգեցան արարածք
ամենայն՝ · և վերստին մարդն ան


մա

մահացա՛ւ · զարդարեալ ՚ի զգե՛ստ
անկողոպտելի: Ընծրեածին բո՛_
ժակ հրաշոսան՝ · որ հեղար յառա՛_
քեալսն ՚ի մեր վէրնատանցն · հեղ և ՚ի
մեզ հոգիդ մեր ստորեա՛ծ · ընդ
պատմուճանին զքո զիմաստութի՛:
Տանջում փայլելէ սրբութ՝ · որ ըզ
գեցոր ըզ փայլեցութ՛ց · սրբութի
փառաց ընդ մէջ քո ածեալ՝ · պա
տեալ ը՛զ մեզ ՚ի մեր ծոցնմարտուց:
Մ՛ր զօրարշատորմ բաղուկըս քո՝ տա՛
րածեցեր ընդ դէմ ատեղանցդ ·
հաստատեալ զբաղուկս մեր կարողու
թեա՛ն · համբայրձեմամբ ձեռաց առ
քեզ մեծոպորդիլ: Ողորմամբ թագ
՚ի գլուխ՝ պատեսցէս ը՛զ մեզ և ըզ
գայարմ՛անս՝ · խաչմնից ողորմամբ
ըստ ուհարօծնի՛ · ծաղկեալ յոսկե_
թել ՚ի զարդ խորանին: Ռամից բո_
լորից՝ տիրապէս ած պետական՝ ·
Նախարարապատ սիրով զմեզ զգեստա_

ւորեցեր · քում որ խորհրդոյդ
լինել սպասաւոր։ Թագաւոր երկ
նաւոր՝ զեկեղեցի քո անշարժ պա
հեա· եւ զերկրպագողս անուանդ
քում պահեա ի խաղաղութեան։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ· եւ շուրջ
եղէց զսեղանով քով Տէր։ Դատ արա
ինձ Տէր՝ զի ես յանմեղութեան իմում գնա
ցի· ի Տէր յուսացայ՝ զի մի՛ եղէց հիւ
անդ։ Փորձեա զիս Տէր եւ քննեա զիս·
փորձեա զերիկամունս իմ եւ զսիրտ իմ
Ողորմութիւն քո Տէր՝ առաջի աչաց իմոց·
եւ հաճոյ եղէց ճշմարտութեան քում։
Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց· եւ
ընդ անօրէնս ես ո՛չ մտից։ Ատեցի ես
զժողովս չարաց· եւ ընդ ամպարշտաց ես
ո՛չ նստայց։ Լուացից սրբութեամբ զձեռս
իմ· եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր։
Լսել զձայն օրհնութեան քո· եւ պատ
մել զամենայն սքանչելիս քո։ Տէր սիրեցի
զվայելչութիւն տան քո՝ եւ զտեղի յար
կի փառաց քոց։ Մի՛ կորուսաներ
ընդ ամպարշտաց զանձն իմ· եւ մի՛ ընդ


արս

արծ արիւնահեղս զկենաց իմ: Որոց
ձեռք խաբեանց յանօրէնութե՛ն են.
և աջն նցա լի է կաշառօք: Այլ ես յանբծութե՛ն
իմում գնացի. փրկեա զիս տէր և ողոր
մեա ինձ: Ոտն իմ կայցէ յուղղութե՛ն.
յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:

Փառք հօր և որ":

Այլ մն սրբուհւոյ ածած":

Որ զածածինն և զամ տես բարեխօս
արասցուք առ Հայր՚ի յերկինս. զի կա
մեցեալ ողորմեսցի. և գթասցէ կեց":
Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօ":
Այս ապա ասէ, Խոստովանիմ առաջի այ"
Այս Դրքնաշլոյ խոհանայն ասէ, Ողորմեսցի"
Այս Ենոքայ ասէ, Ազատեսցէ և զձեզ":
Յիշեաջիք և զմեզ առաջի անմահ գա
ռին այ: Յիշեալ լիջիք առաջի ան":
Աղաչակեցէք առ տր տմ երկիր":

և այլն ող ՚ի Թիւն, 298:

Որ եկեղեցի ցեառս աղաչեսցուք զտր՚ զի
ամենայն փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց. և կե
ցուսցէ շնորհիւ ողորմութե իւրոյ. ամ":
՚Ի մէջ տաճարիս և առաջի ածրն":
Առաջի սեղանոյ այ առ ած.

Ուրախ առնէ զմանկութիւն իմ։
առա լինել ած․ և խրախ առա՛՛։
և այլն ՚ի թիւն, 484։
Հնեսցուք զամենակալն ած զհայր
ն մերոյ յսի քի․ որ արժանի արար
զ կալ ՚ի տեղւոջ փառաբանութե
երգել զերգս հոգևորս․ ամե՛՛։
յարկի սրբութե՝ և ՚ի տեղւոջ փա՛՛։

---

― Ապա ձգեն զվարագոյրն․ և դպիրքն եղա
նակեն մեղեդի բաւ պատշաճի աւուրն․ կամ տաղ
խորհրդական։

Ծարքայն աւետեաց ձայնիւ․ հնչէ․
զարթիք՛՛՛ և գոչէր սրբութեանն։
Մուքեզ առաքելն մաքուր․ հնչէ․
պատրաստեալ՛՛՛ տեղի տէրունեան։
Նոր ծաղիկ այսօր բղխեա՛՛՛
յարմատոյն յեսսեայ։ Նա որդի
դաւթի․ ծնանի զորդին ած՛յ։
Դ՛՛ փառաց թագաւո՛՛՛րն․ այսօր
եկեալ ընծայումն։ Կատարելով
նա զօրէ՛՛՛ նա․ քառասնօրեայ գա՛
ընտանեամբըն։  Մա

Փառ Մատ եբրայեցւոց մանկունքն
զերգ օրհնութեան առեալ. հետ
թմբկահարին դաւթի. տօնակցին
վերինքն եղեալ:

Յար Ես ձայն զուարթուն
առնեմ. որ գոչէ
մր ի քառաթեւին:
Ի քառաթեւին գոչէր. հէհէ. ի քառ.
ձայն առներ ի սանդարամետան:
հէհէ. ձայն առ":

Երկր Այսօր նոր աւետ հարեալ ի նորա
հրաշ աւետարանէ. հէհէ.
ի նոր: Այսօր նոր շուշան ծաղկեալ
ի նորաստունկ բուրաստանէն:

Համ Այսօր անդրանիկ հօր միածին
որդին. յերկինս սրբանոյ ամպ
մայրն կերպին: Որպէս ներբո
ղից եղանակեն այսօր. հոգւոյ հոգե
ղինաց երկնաւորացն խմբից:

Նոր Որհնեցէք հոգւոյն նորհագր

վայելչութ։ Մայրութ բանին․
զարմանալութիւնն նախ առնեմք։
Պահ՜ամբ վարդն վառամանեալ․ նշխէ․
գոհամբ վառ։ Ի վեհից վարուցն
արփենոց․ նշխէ․ ի վե։ Ի վեր ի վերայ
վարուցն պղպջէր ծաղկի ծո
վայն․ պղպջէր ծա։

Այսօր գաբրիէլ հրեշտակապետն
եկեալ․ բերեալ զբարեբանն պսակ
կաղթօղ կուսին։ Այսօր կոչեցեալ
առ բոլորեցուն տէր․ ընդունարան բարձ
րելոյն և զբնակարան հոգւոյն։

Խաչն ի նախնեացն երևեցաւ
ծաղկեալ ի դրախտն տէր ծածկեալ․
մխիթարիչ եղեալ սեթայ նախա
գուշակ հօրն ադամայ․ մեք ի յայն
փայտն ևս յուսացեալ զոր տէր
յա բևեռեցաւ․ և խոնարհեալ երկիր
պագեմք տէրունական նշանին։

Պ... վեհս բերկրանաց քաղ

 ցըրա

ցըրամանոյնեան երգեմք
ձեզ հրեշտակապետք. և հրեշտա-
կաց գնդամբք:

առ.ք Արեգականն արդար որ ի հօրէ ծա-
գեալ. զառաքելոցն քո անճառ շնոր-
հօք լուսաւորեցեալ: Առ հայր լուսոյ ցուցեալ
հայաստանեայց ազգաց, մեծին թա-
դէոս բարդուղիմեաւ փայլեալ:

բրդ Ծոցին խորոցն անճառ. խորհրդ-
դաստւք ըստ մարդեղութեան.
բանին պատմօղք զապագային.
յառաջնորդոյն զեղեղուն:

Սկ Զհանդէս տօնի քո ուրախա-
ցեալ ցընծամք. հայր և փառադի-
տր հայրապետ պետրոսա:

կզ Եկեղեցի կաթողիկէ ի հայաս-
տան. այսօր զմանկունս ժողովեալ
խոր հանճարոյն:

Օրհնբէալն որ ասեն՝ Ողորմեա Տէր:

Նորհեալդ յաստուածոյ. ով երջա-
նիկ տր քահանայ: Ի լմանեալ



ահա

ահարօնի . և մովսէսի մարգարէին:
Նայնմ որ զգեստաւորեալն էր յօրինօղ
զոր ահարօն միշտ ընդ գենեօք: Յօ
րինէր ընդ պատմուճանն . զոր չո
րից կազմեալ նիւթոց: Ի կարմրոյ
ի կապուտոյ ի բեհեզոյ ի ծիրանւոյ:
Թելլ զթելին յօրինէր . կարգն առա
ջին էր կարկեհան: Եւ օծման
գրապանին . շուրջանակի բոլորա
շէն: Եւ յընթացս գարշապարին
հընչէր երկիր ցընծայր խորանն:
Նորդ ի նոյն նմանութիւն . քս ընդ մեր
տրս յօրինէ: Յորժամ մտցես ի սբ
խորանն . ամէն յիշեցես զմեր ննջե
ցեալսն: Յորժամ առնես ընդպատա
րագս՝ յիշեա և զիս ընդ [illegible]:
Զի և մեզ ողորմեսցի ի միւսանգամ
գամն իւր գալստեան: Հօրըն փառք
Որդւոյն պատիւ . և սբ հոգւոյն
այժմ յաւիտեան: Յաւիտենից յա
ւիտենից: Քս օրհնեալ ի հաւիտենից:

Տաղաչափ. ի Յնչարչուսէ Պետրոսեան։

Յայս յարկ նուիրանաց ուխտի
տին տաճարի՝ • ժողովեալքս աս
տանօր ՚ի խորհուրդ պաշտման պա
ղատանաց աղաչեմք մեք պատարա
գիս՝ • խնկօք անուշհոտ խունկ ա
ռեալ պարեմք ՚ի վերնայարկ սրահն
խորանիս՝ • ուղղեսցէ ընկալ զաղօթս
մեր՝ որպէս բուրումն անուշահոտ
խնկոց տաշխիյ և կինամոնաց՝ •
և ը՛նդ մատուցողըս պահեա՛ սրբութ
միշտ և համապատիւ քեզ սպասաւորել •
բարձր խոստովանութեամբ մօր քո և կուսի •
ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից •
Որ գերագոյն քան զերկինս պայ
ծառացուցեր տուրս զեկեղեցի ա
ռեալն քո Քս՝ • և ըստ երկնայնոցն
կարգեցեր ՚ի նմա զդասս առաքելոց
և մարգարէից մեք վարդապետաց՝ •
այսօր ժողովեալ դասք քահանայից՝
սարկաւագաց՝ դպրաց և գլերիկո
սաց՝ • խունկ մատուցանեմք առաջի

| | |
|---|---|
| Ողորմեա՛ ինձ ած ըստ մե" | 210 |
| Ողորմեա՛յքն | 313 |
| Որ բնակեալն է յօգնու" | 469 |
| Պսակիչ որց քս որ պսա" | 412 |
| Պօղոս առաքեալ մի քն | 412 |
| Սաղմոսք աւետարանի | 76 |
| Սեղան օրհնէքն | 438 |
| Սիրելիք՝ սիրեսցուք զած | 401 |
| Սիրեցի զի լու՛իցէ տր | 414 |
| Սբ ած, սբ և հզօր, սբ և | 247 |
| Սբ ես տր ած մեր հզօր և | 264 |
| Սբ խաչի՛ս աղաչեսցուք | 269 |
| Տէր ամենակալ ած աբ" | 273 |
| Տէր բարերար որ մեծաւ | 487 |
| Տէր երկնից փոխն | 217 |
| Տէր եթէ զշրթունս իմ բա" | 13 |
| Տէր զի բազում եղեն նե" | 14 |
| Փառաւորեսցուք զամենա" | 245 |
| Փառք 'ի բարձունս այ | 226 |
| Քեզ վայելէ օրհնութի | 394 |
| Քում ամենազօր և հրա" | 257 |
| Քս ած մս խաչի քոյ | 268 |
| Օրհնեցէք զտր ամ ազինք | 363 |
| Օրհնեցէք մանկունք զտր | 260 |

Կարգք և Խորհուրդ և Աղօթամատոյց Կաթողիկէ-
ասյն Հայոց։

Սկսեալ ՚ի Սրբոյն Թադէոսէ Առաքե-
լոյն և ՚ի Սբ͞յն Գրիգորէ Լուսաւորչէն
մինչև ցայս վայր ՚ի Տէր Պօղոսէն
Կաթողիկոսն։

Համառօտաբար ասորովն բանաւորի ՚ի ձեռս
ձեռն Ա.Յ։


Տէր Սբ͞ Թադէոս առաքեալ 1

Տէր Ադդէ 2

Տէր Թէոփիլոս 3

Տէր Պլոնդ 4

Տէր Սբ͞ Գրիգոր լուսաւորիչ 5

Տէր Արիստակէս 6

Տէր Վրթանէս 7

Տէր Յուսիկ 8

Տէր Փառներսեհ 9

Տէր Ներսէս մեծն 10

Տէր Շահակ 11

Տէր Զաւէն 12

Տէր Ասպուրակէս 13

Տէր Սահակ սուրբն 14

Տէր Յովսէփ 15

Տէր Գիւտ 16

Տէր Յօհան Մանդակունին 17

Տէր Բաբգէն 6 104 18

Տէր Գրիգոր տղայն
Տէր Գրիգոր քարահէժն
Տէր Յօհաննէս
Տէր Գրիգոր ապիրատն
Տէր Յօհան մեծաբարոյն
Տէր Դաւիթ արքակաղնեցին
Տէր Կոստանդին բարձր բերդ
Տէր Յակոբ գիտնականն
Տէր Կոստանդին պրօնագործ
Տէր Ստեփաննոս հռօմկլեցին
Տէր Գրիգոր անաւարզեցին
Տէր Կոստանդին կեսարացին
Տէր Կոստանդին լամբրօնացին
Տէր Յակոբ սսեցին
Տէր Մխիթար
Տէր Մեսրոպ
Տէր Կոստանդին
Տէր Պօղոս
Տէր Թէոդորոս
Տէր Կարապետ
Տէր Դաւիթ
Տէր Կարապետ
Տէր Գրիգոր խանձողատն
Տէր Կոստանդին
Տէր Յովսէփ

6. 105

Տէր Գրիգոր մուտասպեկենց 93
Տէր Կիրակոս 94
Տէր Գրիգոր 95
Տէր Արիստակէս 96
Տէր Զաքարիա 97
Տէր Սարգիս 98
Տէր Յօհաննէս 99
Տէր Սարգիս 100
Տէր Արիստակէս 101
Տէր Թադէոս 102
Տէր Եղիշէ 103
Տէր Ներսէս 104
Տէր Զաքարիա 105
Տէր Սարգիս 106
Տէր Գրիգոր 107
Տէր Ստեփաննոս սալմաստեցի 108
Տէր Միքայէլ 109
Տէր Բարսեղ 110
Տէր Գրիգոր 111
Տէր Ստեփաննոս առընջեցի 112
Տէր Թադէոս 113
Տէր Առաքեալ 114
Տէր Դաւիթ 115
Տէր Մելքիսէթ 1[illegible]
Տէր Սրապիոն

Տէր Սամուէլ 19
Տէր Մօշէ 20
Տէր Սահակ 21
Տէր Քրիստափոր 22
Տէր Ղևոնդ 23
Տէր Ներսէս 24
Տէր Յովհաննէս 25
Տէր Մովսէս [illegible]
Արդ յաջորդութեան Էջմիածնին Հայոց [illegible]
Տէր Աբրահամ 27
Տէր Յօհան Բագարանեան 28
Տէր Կոմիտաս 29
Տէր Քրիստափոր 30
Տէր [illegible] 31
Տէր Ներսէս 32
Տէր Անաստաս 33
Տէր Իսրայէլ 34
Տէր Սահակ 35
Տէր Եղիա 36
Տէր Մէ Յօհան Օձնեցին 3[illegible]
Տէր Դաւիթ
Տէր Տրդատ
Տէր Տրդատ
Տէր Սիմոն
Տէր Իսայէ

6 104

Տէր Ստեփաննոս 4.
Տէր Յովաբ 44
Տէր Սողոմոն 45
Տէր Գէորգ 46
Տէր Յովսէփ 47
Տէր Դաւիթ 48
Տէր Յովհաննէս 49
Տէր Զաքարիա 50
Տէր Գէորգ 51
Տէր Մաշտոց 52
Տէր Յովճաննէս 53
Տէր Ստեփաննոս 54
Տէր Թէոդորոս 55
Տէր Եղիսէ 56
Տէր Անանիա 57
Տէր Վահան 58
Տէր Ստեփաննոս 59
Տէր Խաչիկ. 60
Տէր Սարգիս 61
Տէր Պետրոս 62
Տէր Խաչիկ 63
Գրիգոր վկայասէրն 64
Բարսեղ 65
Գրիգորիս 66
Ներսէս կլայեցին 67

6108

785